ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻՑ

16—31 ՄԱՅԻՍԻ 1997 Թ.

№ 10 (96)

ԳԻՆԸ՝ 50 ԴՐԱՄ

ԿԱՐԴԱՑԵՔ ԱՅՍՕՐՎԱ ՀԱՄԱՐՈՒՄ

Տագնապալի ահազանգ

Բուհական հորիզոններ

ՆՈՐ ԲԱԺԻՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՒՄ ԵՆ ԾԱՌԱՅՈՒՄ ՄԵՐ ԳՅՈՒՏԵՐԸ

Ճառաքաղ

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

— Մենք ապրում ենք ոչ միայն աշխարհագրական, պատմական նույն տարածաշրջանում, այլև մեզ միավորում է մշակութային, հոգեբանական նույն միջավայրը,— ՀՀ ԳԱԱ նախագահության անունից ողջունելով Վրաստանի ԳԱ պրեզիդենտ Ա. Ն. Թավխելիձեին, ասաց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը: ՎԳԱ պրեզիդենտը Հայաստան էր ժամանել էդ. Շեվարդնաձեի գլխավորած պատվիրակության կազմում: Մեր երկու ակադեմիաների միջև հաստատվել էին իսկական եղբայրական հարաբերություններ, որոնց ակունքներում կանգնած էին գիտության մեծագույն երախտավորներ Վ. Համբարձումյանն ու Մուսխելիշվիլին:

— Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո,— հայ գործընկերներին պատմեց Ա. Թավխելիձեն,— խզվեցին և մեր կապերը: Անհրաժեշտ է այն վերականգնել և նոր թափ հաղորդել, քանի որ եթե մշակույթը, քաղաքականությունը ազգային արժեքներն են, գիտությունը՝ ապազգային է և կարող է միացնող դեր խաղալ ժողովուրդների համար:

Հյուրին ողջունեցին և հայ-վրացական գիտական կապերի, հայ-վրացական բանասիրության, պատմության բնագավառներում եղած խնդիրների համատեղ ուսումնասիրության և լուծման առաջարկներ արեցին ակադեմիկոսներ Ռ. Մարտիրոսյանը, Թ. Ասաթիանին, Գ. Սարգսյանը, Է. Գաբրիելյանը, Գ. Բրուտյանը, գիտությունների դոկտորներ Ն. Հովհաննիսյանը, Ռ. Մկրտչյանը, Պ. Մուրադյանը, Գ. Պողոսյանը:

°•°

ՀՀ ԳԱԱ նախագահության հյուրն էր Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի դեսպան Յու. Մկրտումյանը:

— Ինձ պատվավոր առաքելություն է վստահված այսօր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանին հանձնել ՄԱԿ-ի միջազգային ինֆորմատիզացիայի ակադեմիայի անդամության դիպլոմն ու սերտիֆիկատը, որին նա արժանացել է նշված ակադեմիայի որոշմամբ:

Նույն նիստում երկրորդ դիպլոմն ու սերտիֆիկատը հանձնվեց կենսաբանական գիտ. դոկտոր Նազիկ Խանջյանին:

Ապա ՌԴ-ում ՀՀ դեսպանը ներկայացրեց հայ-ռուսական հարաբերությունների արդի վիճակը, կարևորելով այդ հարաբերությունների բարի դրացիությունն ու ջերմությունը: Նա կանգ առավ նաև Ռուսաստան-ՆԱՏՕ, ՌԴ ներքին իրավիճակի, Չեչնիայի, Արցախի հարցում ՌԴ դիրքորոշման և այլ խնդիրների վրա:

°•°

ՀՀ ԳԱԱ նախագահության հերթական նիստը, որը վարում էր գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, անդրադարձավ իր իսկ՝ 1996 թվականի դեկտեմբերի 11-ի «Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի պահպանության և ուսումնասիրման բնագավառում միջազգային համագործակցություն ծավալելու մասին» որոշման կատարման ընթացքին:

Զեկուցողը, ՀՀ ԳԱԱ ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի նախագահ Լավրենտի Բարսեղյանը, հանգամանորեն ներկայացրեց այդ ուղղությամբ կատարված աշխատանքները:

Արժանին մատուցելով կարճ ժամանակում Լ. Բարսեղյանի ջանքերով կատարված արդյունավետ աշխատանքին, ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշեց.

— Քանի որ ներկայումս հընարավոր չէ միջպետական մակարդակով քննարկել Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հուշարձանների պահպանության հարցերը, փորձել այդ նպատակով համագործակցության կապեր հաստատել երկու պետությունների ուսումնական և գիտական հաստատությունների միջև:

— Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնին թույլատրել ստեղծելու տուրիստական սպասարկման գիտաարտադրական ձեռնարկություն՝ սահմանամերձ գոտում (ուղեկալի տարածքում), Ախուրյան գետի ձախ ափին, Անի քաղաքը դիտելու հրապարակ և զբոսաշրջիկների սպասարկման անհրաժեշտ ծառայություններ կազմակերպելու համար:

— Հանձնարարել ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքին՝ առաջարկություններ ներկայացնել հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից Ախուրյան գետի ձախ ափի սահմանամերձ գոտում հնագիտական հետազոտություն կատարելու ուղղությամբ:

— Անհրաժեշտ համարել Անի քաղաքի քաղաքական, տնտեսական և մշակութային պատմությանը նվիրված տարբեր լեզուներով գիտական գրականության հրատարակումը պետական պատվերի միջոցով:

— Խնդրել ՀՀ արտաքին գործերի նախարարությանը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային հանձնաժողովին՝ ելնելով հուշարձանների և պատմական վայրերի պահպանության մասին գոյություն ունեցող միջազգային փաստաթղթերի առկայությունից, հարց բարձրացնել 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից մեծապես տուժած և փլուզման վտանգի տակ գտնվող հայ ճարտարապետության նշանավոր հուշարձաններից մեկի՝ Անիի Մայր տաճարի վերականգնման, Անի քաղաքը միջազգային պատմահնագիտական արգելոց-թանգարան հայտարարելու, Անիի հնագիտական պեղումներին հայ հնագետների և արվեստագետների մասնակցության մասին:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը լսեց և հավանություն տվեց կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Արմեն Գալոյանի հաղորդմանը՝ ԱՊՀ երկրների կենսաքիմիայի կենտրոնի ստեղծման և նրանում ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտի բաժնեչափային մասնակցության մասին:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, նկատի ունենալով Հովսեփ Օրբելու մեծ ներդրումը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման, Հայաստանում գիտության կազմակերպման ասպարեզում և նրա խոշոր գիտական վաստակը հնագիտության և ազգագրության բնագավառում, որոշեց ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը անվանակոչել Հովսեփ Օրբելու անունով և դիմել ՀՀ կառավարությանը՝ համաձայնություն տալու խնդրանքով:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

Համակարգչային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ

ՀՀ ԳԱԱ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի գիտական պրոբլեմային խորհուրդը և ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը կազմակերպում են գիտաժողով՝

ԿՈՄՊԻՈՒՏԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ԿԳԻՏ—97)

թեմայով:

Գիտաժողովի նպատակն է աջակցել ինֆորմացիայի փոխանակմանը կոմպյուտերագիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում: Հայաստանի տնտեսական նոր ժամանակաշրջանում ԿԳԻՏ—97-ը նշված բնագավառի առաջին գիտաժողովն է:

Այն տեղի կունենա Երևանում, 1997 թ. սեպտեմբերի 25—29-ը՝ ՀՀ ԳԱԱ-ի նիստերի դահլիճում:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու ցանկության դեպքում առաջարկվում է ներկայացնել գիտական զեկուցումների դրույթներ, հետևյալ ուղղություններով՝

- Ալգորիթմներ, ավտոմատներ, տրամաբանություն.
- Դիսկրետ մաթեմատիկա և կոմբինատորիկա.
- Կոդավորման տեսություն.
- Արհեստական բանականություն և կառավարման աջակցող համակարգեր.
- Կերպարների ճանաչում և պատկերների մշակում.
- Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ.
- Տարաբաշխված մշակումներ:

Ընդլայնված ամփոփումների ծավալը սահմանափակվում է 4 էջով:

Հեղինակները կարող են ուղարկել 2 օրինակ (Ա4 ֆորմատ, բնօրինակի 70 տոկոսի չափով վերատպմամբ ենթակա) փոստով, կամ Տեքս ֆայլ էլ-փոստով, հետևյալ հասցեով.

Երևան, Պ. Սևակի 1, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ, պրոֆ. Ե. Հարությունյանին:

Էլ-փոստ, հեռ.՝ 21950, ֆաքս՝ 285812:

Գիտաժողովի նյութերի ընդունման ավարտն է՝ 1 հունիսի 1997 թ., ստացված նյութերի հաստատման ժամկետը՝ 1 հուլիսի, 1997 թ.:

Դիմել ՀՀ ԳԱԱ կոմպյուտերային տեղեկատվական հրատարակչական բաժին՝ Մ. Բաղրամյան պող. 24:

Հեռ.՝ 52-67-42:

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ ԳԱԱ նախագահությունը և Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը կազմակերպում են գիտական նստաշրջան՝ նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան 100-ամյակին: Նստաշրջանը տեղի կունենա մայիսի 29—30-ին, ՀԱԱ նիստերի դահլիճում:

Սկիզբը՝ ժամը 11-ին:

ՊՈԼԻՏԻԿ ԷՏՐԱՆԺԵՐ

Ֆրանսիական «Պոլիտիկ Էտրանժեր» («Արտաքին քաղաքականություն») հանրահայտ ամսագիրն իր ծմեռ 1997 համարում տպագրել է ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի «Կովկասի անվտանգության և խաղաղության հեռանկարները» հոդվածը: Ր. Հովհաննիսյանը, անդրադառնալով Կասպյան ավազանում և Կենտրոնական Ասիայում վերանորոգված մրցապայքարին, մատնանշում է այդ համատեքստում Անդրկովկասի աշխարհաքաղաքական մեծ նշանակությունը՝ տարածաշրջանային տերությունների էական երկխոսությամբ ու կառուցողական դերակատարմամբ հատկապես Անդրկովկասում խաղաղության ու ապահովության հաստատումը, այն համարելով Կասպյան ավազանում և Կենտրոնական Ասիայում անվտանգության նախապայման: «Ավելին,— նշում է հեղինակը.— Արևմուտքն առավել խոր հանձնառություն պետք է կենսագործի հաղորդակցության այլընտրանքային ուղիների զարգացման և կովկասյան պետությունների տնտեսական սերտաճման ու բարգավաճման գործում: Համաշխարհային հանրությունը պետք է նոր և առաջադեմ մոտեցում ցուցաբերի Ղարաբաղյան խնդրի նկատմամբ: Եվ վերջապես, հրապարակավ անդրադառնալով Հայոց ցեղասպանությանն ու դրա ժառանգությանը, այն պետք է խթանի Թուրքիա-Հայաստան երկկողմ հարաբերությունների իրական լուծմանը:

ԱԿՆԹԱՐԻ. Այս նեգակի լուսանկարի չատ մարդիկ արգեն պատմություն դարձել։ Բայց նրանք կապրեն հավերժ մարդկանց հիշողության մեջ։ Կապրեն, որովհետև նվիրումով են ծառայել այդ պատմությանն ու ժողովրդին, ստեղծելով ու թողնելով բազմաթիվ մեծ ու փոքր արժեքներ։

Ավետիք Իսահակյան (կենտրոնում, Կարո Ղաֆադարյան (ձախից), Ստեփան Լիսիցյան (աջից), Բորիս Պիոտրովսկի։

Տագնապալի ահազանգ

Կորցնում ենք այն, ինչով հպարտանում էինք

Հայտնի է, որ գյուղատնտեսական մշակաբույսերին վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի պատճառած կորուստները կազմում են հնարավոր բերքի 20—30 տոկոսը: Տասնամյակներ շարունակ վնասատուների դեմ պայքարի լավագույն միջոց էին համարվում **պեստիցիդները**, որոնք թունաքիմիկատներ են: Վաղուց պարզվել է, սակայն, որ վերջիններիս լայն օգտագործումը բերում է մի շարք անկանխատեսելի և անցանկալի հետևանքների, այն է՝ շրջակա միջավայրի աղտոտում, կենդանիների ու բուսականության թունավորում: Եզրակացությունը այստեղ մեկն է՝ դաշտերի, այգիների, անտառների մշակումը թունաքիմիկատներով, օգուտների հետ միասին, ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհում, հանգեցնում է անուղղելի երևույթների, և, ամենից կարևորը՝ խաթարում էկոլոգիան:

Այս երևույթի խորացումը թելադրում էր փնտրել ու գտնել փակուղուց դուրս գալու ելքը: Ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով: Այդ հարցերն ամբողջ աշխարհում մտահոգում էին և՛ գյուղատնտեսության ոլորտի աշխատողներին, և՛ այս խնդրով զբաղվող գիտնականներին: Յոթանասունական թվականներին վիճակը դարձավ առավել տագնապալի: Միաժամանակ հենց այդ շրջանում էր, որ երևացին նաև առաջին հուսադրող արդյունքները: Նախ հասունացավ այն միտքը, որ վնասատուների դեմ պետք է պայքարել՝ հետևելով նրանց զարգացման օրինաչափություններին, հատկապես՝ նրանց **աճի հետ կապված քիմիական ռեակցիաներին**, որոնց ընթացքում օգտագործվում են իրենց իսկ կողմից արտադրված քիմիական միացությունները՝ **ֆերոմոնները** և **հորմոնները**: Հետևանքը եղավ այն, որ քիմիկոսները իրականացրին բազմաթիվ ֆերոմոնների ու հորմոնների լաբորատոր սինթեզներ, և կենսաբանների հետ սկսեցին ուսումնասիրել դրանց ազդեցությունը միջատների զարգացման, բազմացման, թռիչքի, սեռական հասունացման, ձվադրման, թրթուրների ու լիցքերի վրա: Ինչպես նշվեց, բույսերի պաշտպանության էկոլոգիապես անվտանգ հիմնական միջոցներից են ֆերոմոնները, որոնք բնական միացություններ են: Դրանք կենսաբանորեն ակտիվ նյութեր են, շրջակա միջավայր են արտազատվում կենդանի օրգանիզմների (ամենը՝ միջատների) կողմից և ընկալող տեսակի մոտ առաջ են բերում համապատասխան ռեակցիա (որոշակի վարք կամ զարգացման բնորոշ ընթացք):

Ներկայիս հայտնի ֆերոմոններ փնտրել դրանց օգտագործմամբ պայքարելու բուսական և կենդանական աշխարհի վնասատուների դեմ:

Այսօր զարգացած երկրներում փորձում են կիրառել բույսերի պաշտպանության ինտեգրացված համակարգ, որի հիմքում ընկած է վնասատուների ոչ թե իսպառ ոչնչացման, այլ քանակի կարգավորման սկզբունքը՝ մատչելի և անվտանգ մեթոդների օգնությամբ:

Ինչպես նշվեց, բույսերի պաշտպանության էկոլոգիապես անվտանգ հիմնական միջոցներից են ֆերոմոնները, որոնք բնական միացություններ են: Դրանք կենսաբանորեն ակտիվ նյութեր են, շրջակա միջավայր են արտազատվում կենդանի օրգանիզմների (ամենը՝ միջատների) կողմից և ընկալող տեսակի մոտ առաջ են բերում համապատասխան ռեակցիա (որոշակի վարք կամ զարգացման բնորոշ ընթացք):

Ներկայիս հայտնի ֆերոմոնն-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Հայաստանի կոնֆլիկտների լուծման կենտրոնը և Վրաստանի ժողովրդավարական զարգացման և կոնֆլիկտների կարգավորման կենտրոնը ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում կազմակերպեցին համատեղ քննարկում՝ «Հայաստանում և Վրաստանում քաղաքացիական հասարակության կառուցումը» թեմայով:

Երկու օր տևած քննարկումների ընթացքում լսվեցին մի շարք զեկուցումներ, որոնք մտքերի աշխույժ փոխանակման, ելույթների առիթներ տվեցին: Հասկանալի էին երկու հարևան երկրների գիտնականների մտահոգությունները: Տոտալիտար համակարգից քաղաքացիական հասարակությանը անցնելու ժամանակաշրջանը դյուրին գործ չէ և այն բնորոշվում է հակասություններով ու կոնֆլիկտներով: Հենց այս թեմայով էլ զեկուցում կարդացին Գևորգ Պողոսյանը, Գիորգի Գոգսաձեն, Նիկոլայ Հովհաննիսյանը և Լևան Բերձենիշվիլին: Խնդրո առարկա հարցի առթիվ զեկուցումներով, հաղորդումներով, կարծիքներով ելույթներ ունեցան շուրջ երեք տասնյակ մարդիկ:

Կլոր սեղանի անցկացման հովանավորներն էին Միացյալ Նահանգների տեղեկատվական ծառայությունը, «Կարնեգի» կորպորացիան և «Ուինստոն» հիմնադրամը:

Փակենք աղետի դռները

Հայ ժողովրդի պատմության մեջ շատ են այն հիշարժան իրադարձությունները, որոնք իրենց նշանակությամբ վիթխարի դեր են խաղացել մեր ժողովրդի գոյատևման մաքառումներում: Այդպիսի իրադարձություն էր նաև 1946—1947 թվականներին սկսված մեծ հայրենադարձությունը:

Այսօր արդեն, երբ սոցիալ-տնտեսական վատ պայմանների հետևանքով Հայաստանն ողողակիորեն լքում են հազարավոր հայեր՝ փայփայելով օտար ափերում հանգիստ ու ապահով կյանք գտնելու հույսեր, ոմանց համար, թերևս, տարօրինակ թվա հիշել հայրենադարձության մասին:

Բայց մեր համոզմամբ Հայաստանից շատերի հեռանալու հենց այս տխուր իրողությունը նկատի ունենալով, հարկավոր է բարձրաձայն խոսել հայրենադարձության մասին և արժանին մատուցել այն մարդկանց, որոնք նույնիսկ դժվարին պայմաններում իրականացրին հայրենադարձությունը:

Եվ որպեսզի կարողանանք ըստ արժանվույն գնահատել 1946—1947 թթ. սկսված մեծ հայրենադարձության պատմական նշանակությունը, անհրաժեշտություն է զգացվում մի թռուցիկ հայացք ձգել մեր պատմության այն էջերին, որոնք լեցուն են հայրենիքը հարկադրաբար և, ցավալի է ասել, նաև կամավոր հեռանալու տխուր փաստերով:

Ի՞նչն էր մեր նախնիներին ստիպում հարկադրաբար հեռանալ հայրենիքից և ինչո՞ւ էին նրանք կամավոր հեռանում: Առաջադրելով այս հարցերը, նաև ուզում ենք ընդգծել, որ որքան էլ տարօրինակ հնչի, դրանց պատճառները շատ հաճախ են հանդես եկել միահյուսված կերպով:

Հայոց պատմության մեջ մեծ է Արտաշես Առաջինի (մ.թ.ա. 189—160 թթ.) դերը հենց միայն նրանով, որ նա մի տանիքի տակ հավաքեց այն տարածքները, որտեղ ապրում էին հայերը: Հայոց արքայի այս գործը չվրիպեց հռոմեացի Ստրաբոնի ուշադրությունից, որը նշում էր, թե Արտաշեսի նվաճած տարածքների բոլոր բնակիչները խոսում էին մեկ լեզվով՝ հայերենով, և դա հաստատում էր Արտաշեսի նվաճումների անմիջական հետևանքը:

Արտաշեսից հետո անցել է 2000 տարուց ավելի, սակայն հետագա բոլոր ժամանակները, իրենց կործանիչ փոթորիկներով հանդերձ, չկարողացան վնասել հայոց իմաստուն արքայի դրած հիմքերը:

Սակայն պետականության կորստից հետո, երբ Հայաստանին վիճակվեց ընկնել օտար զավթիչների տիրապետության տակ, սկիզբ առավ հայերին բռնությամբ հայրենի տնից տեղահանելը: Օտարների նպատակը մեկն էր. հայաթափել երկիրը և այդ միջոցով սեփականացնել այն:

Ի պատիվ մեր քաջ նախնիների, միշտ չէ, որ զավթիչներին հաջողվում էր հասնել իրենց նպատակին: Մեր մագաղաթյա մատյանները լեցուն են պետականությունից զրկված հայերի հերոսական պայքարի փաստերով: Այնպես որ, նվաճողներին հեշտությամբ չէր հաջողվում իրագործել իրենց դիվային ծրագիրը:

Բայց, դժբախտաբար, միշտ չէ, որ այդպես էր լինում: Ամենանաբար, քայլ առ քայլ մեր իրականության մեջ սկիզբ էր առնում մի ցավալի երևույթ, որը ստացավ «որտեղ հաց, այնտեղ կաց» բնորոշումը, դառնալով մեր ամբողջ պատմության ուղեկիցը:

Թերևս այս ողբերգության սկիզբը դրվեց 1020—21 թվականներին, երբ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը երկրի սահմաններին մոտեցած թուրք-սելջուկներին դիմադրելու համար ժողովրդի ուժերը կազմակերպելու, նրան ոգեվորելու փոխարեն դիմեց Բյուզանդիային և իրավունք ըն-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՉԿԱ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

(Սկիզբը՝ № № 5—7-ում)

1989 թվին ես մի քանի շրջանների և Գյումրիի կառուցվածքներն ուսումնասիրելուց բացի, մանրամասն հետազոտեցի Վանաձորի շինությունները և հատկապես նախկին «Կիրովականի քիմկոմբինատի» բոլոր շենքերը, որոնք բացառությամբ մի քանիսի, նախագծված և կառուցված են մինչև 1977 թվը, և այն շենքերը, որոնք հաշվարկված են հակասեյսմիկ միջոցառումները հաշվի առնելով, նախագծված են 7 բալ ուժգնության երկրաշարժից առաջացող բեռների ազդեցության տակ, ըստ այն ժամանակ գործող նորմերի պահանջների:

Այդ նորմերով 7 բալի դեպքում սեյսմիկության գործակիցը հավասար էր 0,025-ի, իսկ դինամիկության գործակիցը որոշվում էր 0,9/Պ բանաձևով: Մի գծի վրա կառուցված 4 շենքեր նախագծված և կառուցված են ավելի ուշ, արդեն 8 բալ ուժգնության երկրաշարժի տակ ըստ համապատասխան նորմերի պահանջների. այս նորմերում 8 բալի համար սեյսմիկության գործակիցը հավասար էր 0,05, իսկ դինամիկության գործակիցը որոշվում էր 1/Պ բանաձևով: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «Քիմկոմբինատի» 110 շենքերից միայն մի երկաթբետոնե շրջանակային կմախք ունեցող շենք է ստացել լուրջ, բայցայման համարժեք վնասվածքներ: Ստուգումը ցույց տվեց, որ այդ շենքի հիմքերը, խախտելով նախագիծը, դրված են լիցքի վրա, նախագծային նիշից մի մետր ավելի բարձր: Մնացած շենքերի երկաթբետոնե տարրերում չկան անգամ աննշան ճաքեր (բացառություն են կազմում վերջերս կառուցված երեք կենցաղա-վարչական և լաբորատոր մասնաշենքերը, որոնց հարկերի առույգ բարձրությունները հավասար են 3 մ, իսկ սյուների կտրվածքները՝ 40×40 սմ): Իհարկե, մասնաշենքերի բարե ատհիճանավանդակներում, որտեղ խախտված են նորմերի պահանջները, և քարե պատերի հատկապես անկյուններում, որտեղ նույնպես կան նորմերի խիստ խախտումներ, կան զգալի վնասվածքներ և անգամ փլուզումներ, սակայն երկաթբետոնե կոնստրուկցիաները, եթե հաշվի չառնենք քիմիական կոռոզիան, ոչ մի վնասվածք չի ստացել: Ի՞նչն է պատճառը, որ «քիմկոմբինատի» շրջապատում մեծ քանակությամբ շենքեր լրիվ ավերվել են, իսկ «քիմկոմբինատի» շենքերը մնացել են անվնաս (խոսքը վերաբերում է միայն երկաթբետոնե կոնստրուկցիաներին):

Ներկայիս Վանաձորի «Սուտակ» («Ռուբին») գործարանի (նախկին «Քիմկոմբինատի») տարածքում կատարվեցին մանրամասն երկրաբանական ուսումնասիրություններ և չափվեցին գործարանի տարածքի սեփական տատանումների գերակշռող պարբերությունները: Չափումները ցույց տվեցին, որ գրունտի սեփական տատանումների պարբերությունը փոփոխվում է 0,1—0,3 վրկ. սահմաններում: Այսպիսով, շենքերի սեփական տատանումների գերադասելի պարբերությունները պետք է մեծ լինեն 0,45 վայրկյանից: Ստուգիչ հաշվարկները ցույց տվեցին, որ բոլոր շենքերում սեփական տատանումների առաջին ձևի պարբերությունը, անգամ երկու հարկանի շենքերում գերազանցում է այս ստորին սահմանը, և որոշ շենքերի համար զգալի չափով:

«Սուտակ» գործարանի շենքերը մնացել են կանգուն, թեև տեղի ինչ-որ կազմակերպության ննշման տակ, Մոսկվայի ներկայացուցիչները գործարանի տեղամասի բալականությունը սահմանել էին 10 բալ:

«Սուտակ» գործարանի օրինակը ցույց է տալիս, թե ինչքան կարևոր է ՀՀԾՆ II—2.02—94 նորմերում պատահաբար տեղ գտած 3.1.7 կետի պահանջը. «Սուտակ» գործարանի օրինակը, և ոչ միայն «Սուտակ» գործարանի, այլ և Սպիտակի երկրաշարժից առաջացած ավերումներն ու վնասվածքները Հայաստանի այդ աղետին ենթարկված ամբողջ տարածքում, ցույց են տալիս, թե ինչքան ավելի ճիշտ էր նախկին նորմերով տեղամասի բալականության սահմանումը ներկա նորմերում ընդունված սեյսմիկ գոտիացման քարտեզի համեմատությամբ: Ավերվածքների անգամ թռուցիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի քարտեզի վրա կամայապես տարված գծերով հանրապետության տարբեր գոտիների բաժանած տարածքներից լուրաքանչյուրում, կամ անգամ միևնույն քաղաքի, միևնույն փողոցի իրար կից կառուցված շենքերում միևնույն գոտում վերագրված երկշարժը միևնույն կառուցվածք ունեցող շենքերի վրա, և անգամ միևնույն շենքի տարբեր հատվածների վրա ունեցել է իրարից խիստ տարբերվող ազդեցություններ: Ինչպես կարելի է միևնույն պահանջները ներկայացնել տարբեր կարգերի գրունտների վրա կառուցված երկու միևնույն կառուցվածք ունեցող շենքերի նկատմամբ: Չէ՞ որ սեյսմիկ հարվածի տակ աշխատելու դեպքում (իսկ ճիշտ նախագծված շենքը չի կարող գտնվել ռեզոնանսի ինտերվալում) այդ երկու շենքերի վրա ազդող ուժերը իրարից տարբերվում են առնվազն երկու անգամ: Գրունտների կարգը սահմանող 1.2 աղյուսակում բերված տեղամասի սեփական տատանումների պարբերությունը ցույց է տալիս, որ կախված այդ պարբերությունից, կարող է փոխվել և փոխվում է ինչպես շենքին միևնույն երկրաշարժից փոխանցվող կինետիկ էներգիան, այնպես էլ հիմքի տատանումների պարբերություններն ու արագացումները: Հետևապես Երևանի ամբողջ տարածքը միևնույն գոտուն վերագրելը և առանց հաշվի առնելու շենքի կառուցման տարածքի առանձնահատկությունները, շենքերի նկատմամբ միևնույն սահմանափակող պահանջներ ներկայացնելը, մեղմ ասած, անտրամաբանական է: Երևանը, որի տարածքը գրունտային պայմանների տեսակետից խիստ անհամասեռ է, իսկ գրունտային պայմանները հանդիսանում են երկրի կեղևից երկրաշարժը շենքին հաղորդող զտիչ, չի

ԶԳՈՒՇԱՑԵ՛Ք, ԵՐԿՐԱՇԱՐԺ Է

կարելի բնորոշել միայն քարտեզի վրա գոտիացումը բնորոշող մի թվով: Նշենք, որ գոտիավորման քարտեզի վրա տվյալ գոտում գրունտի կետերի արագացությունները հաշված են միայն ըստ երկրորդ կարգի գրունտների համապատասխանող տեղամասի սեփական տատանումների պարբերության առավելագույն արժեքի, հետևապես, շենքին փոխանցվող կինետիկ էներգիայի քանակությունը, անգամ միևնույն կարգի գրունտների համար, միևնույն երկրաշարժի ժամանակ կախված այդ պարբերությունից տարբեր կստացվի:

ՀՀԾՆ II—2.02—94 նորմերի թերությունների թվարկումը կարելի է շարունակել, բայց ինձ թվում է, որ նշված թերությունները արդարացնում են պրոֆ. Սեդրակյանի այդ նորմերը որպես խոտան բնորոշումը, որը սակայն շատ մեղմ է: Այդ նորմերի վերաբերյալ իմ կարծիքը ես նախքան նորմերի հաստատումը բանավոր և գրավոր հայտնել եմ ինչպես ՀՀ ճարտարապետաշինարարության պետ Ռ. Ջուլֆակյանին, նույնպես և նրա տեղակալ (խոսքը վերաբերում է 1994 թվի աշնանը) Ս. Կարապետյանին, սակայն իմ նախազգուշացումները նրանք թողել են անհետևանք:

Ես համարում եմ, որ միայն այս նորմերի անհապաղ անվավեր հայտարարելը և ԱՊՀ երկրների հետ համատեղ հակասեյսմիկ շինարարության նախագծման նոր նորմերի մշակումը մեզ կարող է փրկել ոչ միայն գոյություն ունեցող շենքերի սեյսմակայունության վերաբերյալ սխալ պատկերացումներից, այլև հետագա երկրաշարժերի ժամանակ այդ նորմերով նախագծված շենքերի նոր աղետային քայքայումներից:

Ես ուզում եմ կանգ առնել պրոֆ. Սեդրակյանի առաջ քաշած ևս մի հարցի վրա: Պարզ է, որ ցանկացած աղետային քայքայում մեզ տալիս է շատ արժեքավոր նյութ, հետագայում քայքայման պատճառ եղած սխալից խուսափելու համար: Հետևապես յուրաքանչյուր քայքայման դեպք, առավել ևս խոշոր կառուցվածքի քայքայումը, պետք է մանրամասն ուսումնասիրության առարկա դառնա և այդ ուսումնասիրության արդյունքները պետք է դառնան լայն հասարակայնության սեփականությունը: Պրոֆ. Սեդրակյանը հիշեցնում է երկու այդպիսի կառուցվածքների մասին՝ Մարմարիկի ջրամբարի պատվարի և Երևանի Հրազդանի մեծ կամրջի քայքայման դեպքերը: Մարմարիկի ջրամբարի պատվարի նախագծման և շինարարության հետ ես կապված չեմ եղել և այդ պատվարի աղետի մասին կարող է տեղեկություններ տալ աղետի հետ ավելի մոտ ծանոթ մասնագետ: Ինչ վերաբերում է Հրազդանի մեծ կամրջին (ներկայումս՝ Կինչան), ապա ես ոչ միայն աղետից հետո կամուրջը նախագծող կոլեկտիվից միակ կենդանի մնացած անդամն եմ, այլև ես Խ. Ե. Մաշինյանի հետ միասին անմիջապես զբաղվել եմ աղետի պատճառների ուսումնասիրությամբ: Պրոֆ. Սեդրակյանը հույս է հայտնում, որ կամրջի շինարարության որակի նկատմամբ հսկողությունը լրիվ ապահովված է եղել: Ես ընտիպված եմ հիասթափեցնել նրան:

Ցանկացած կառուցվածքի քայքայման պատճառները միայն երկուսը կարող են լինել, կամ կառուցվածքի նախագծի մեջ թույլ է տված ավել կամ պակաս կոպիտ սխալ, կամ այդ կառուցվածքը անորակ է իրականացվել: Քայքայման պատճառ կարող են դառնալ նաև տարերային աղետները՝ երկրաշարժը, փոթորիկը, ջրհեղեղը և այլն: Սակայն տարերային աղետներն էլ պետք է հաշվի առնվեն նախագծում և դրանց սխալ հաշվառումը նախագծային սխալ է համարվում: Իհարկե, կառուցվածքը կարող է քայքայվել միաժամանակ և նախագծային սխալի, և անորակ շինարարության պատճառով: Այսպիսի մի օրինակ է Հրազդանի մեծ կամրջի կամարի աղետի դեպքը: Ստուգիչ հաշվարկները ցույց տվեցին, որ կամարի կրող մետաղական ֆերմայի տարրերի լայնական կտրվածքների մակերեսները ընտրված էին սխալ. որոշ տարրերի լայնական կտրվածքների մակերեսները վերցված էին երկուսից երեք անգամ հաշվարկով պահանջվող մակերեսից փոքր: Նման սխալների պատճառը ֆերմայի հաշվարկային որվարի սխալ ընտրության արդյունքն էր: Սակայն ինչպես ցույց տվեցին ստուգիչ հաշվարկները, շինարարության այն շրջանում, երբ տեղի ունեցավ աղետը, հաշվարկների մեջ եղած անճշտությունները քայքայման պատճառ չէին կարող լինել: Իհարկե, շինարարությունը շարունակելու դեպքում, հինգերորդ բաժնմասը բետոնելիս, կամարը, անգամ իրականացման բարձր որակի դեպքում, կքայքայվեր (աղետը տեղի էր ունեցել երկրորդ բաժնմասի բետոնը տեղադրելիս): Քայքայման պատճառ էր հանդիսացել կամրջի նախագծի հեղինակ համարվող Վ. Վ. Փինաջյանի թույլ տված սխալը: Կենտրոնական հոդակապին հարևան տեղամասում թեքանը նախագծված էր երկու անկյունակից կազմված ձողի տեսքով, որը հանգույցին էր միացվում երեք մաքուր հեղյուսների միջոցով: Քանի որ շինարարների տրամադրության տակ այդ պահին նախագծով նախատեսված լայնական կտրվածքի մակերեսով անկյունակ չէր եղել, նրանք խնդրել էին Վ. Վ. Փինաջյանին, թույլատրել երկու անկյունակների փոխարեն թեքանն իրականացնել մի-երկու անգամ ավելի մեծ լայնական կտրվածքի մակերես ունեցող անկյունակից: Վ. Վ. Փինաջյանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու անկյունակը մեկով փոխարինելիս ձողը հանգույցին միացնող հեղյուսների կտրումների թիվը երկու անգամ նվազում է, և ուժի փոխանցումը հեղյուսի վրա դառնում է միակողմանի, գրավոր թույլ էր տվել նախագծի այսպիսի փոփոխությունը: Բացի դրանից, շինարարները մաքուր հեղյուսների փոխարեն դրել էին սև հեղյուսներ, որոնք կիպ չէին զբաղեցնում հեղյուսի համար արված անցքը:

Այս ամենին գումարվեցին նաև որակի հետ կապված թերությունները, որոնք այլ փաստերի հետ գաղտնի էին պահվում հասարակությունից, իսկ կամրջի հեղինակ համարվող Վ. Փինաջյանն իր դասախոսությունների ժամանակ հավատացնում էր ուսանողներին, որ կամուրջը քայքայվել է միայն շինարարների մեղքով, վատ որակի պատճառով: Իհարկե, ուսանողը կարող է հավատալ, որ շինարարության վատ որակի համար մեղավոր է միայն շինարարը, սակայն իրականում վատ որակի համար պատասխանատու է նաև նախագծողը, մանավանդ այդպիսի խոշոր կամրջի շինարարության դեպքում, որը պետք է տարվի հեղինակի ամենօրյա հսկողության տակ:

Ռ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Տ.գ.թ., դոցենտ, ճարտարագետ-կոնստրուկտոր

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.

«Զգուշացե՛ք, երկրաշարժ է» խորագրով մենք բազմաթիվ նյութեր հրապարակեցինք: Բանավեճը, որի ժամանակ սեյսմոլոգիայի մասին նույնիսկ իրարամերժ կարծիքներ եղան, ավարտված է: Իսկ թեման մենք շարունակում ենք:

Օգտվելով առիթից, նաև ուզում ենք նշել, որ ճիշտ 1 տարի առաջ մենք պայմանավորվել էին ՍՊԱԾ-ի ղեկավարության հետ՝ թերթում հոդվածաշարով հանդես գալու մասին: Սակայն, պարզվեց, որ ՍՊԱԾ-ը բնակչությանը երկրաշարժի մասին գիտելիքներ տալու իր հիմնական առաքելությունը համարում է երկրորդական, դրա փոխարեն շարունակում է թմբկահարել «նվաճումներն ու ձեռքբերումները», տարածաշրջանում միակը լինելու իր առավելությունների հեռուստատեսային ներբողահարումը, առավելություն, որի «վառ վկայությունն» այն էր, որ Երևանում գրանցված փարաքարյան երկրաշարժի մասին ժողովուրդը տեղեկատվություն **չստացավ**: Եվ ահա, օրերս, ՍՊԱԾ-ի ներկայացուցիչը խմբագրություններին բաժանեց երկրաշարժերից պաշտպանվելու մի հուշաթերթիկ, որին կից նամակը ավելի մեծ էր, քան բուն նյութը (իսկ նամակը մեքենագիր կես էջ էր): Այդ հուշագիրը, որը հրապարակվեց մամուլի որոշ օրգաններում, պաշտպանում է, թե ինչ անել **երկրաշարժից առաջ, ընթացքում և հետո:**

Իհարկե, դյուրին գործ է խորհուրդ տալը, բայց ինչպիսի՞ խորհուրդ: Մարդիկ ինչպե՞ս իմանան երկրաշարժի մասին, որ «նախապես որոշեն տան կամ աշխատատեղի ամենաանվտանգ տեղերը, որտեղ կարելի է պատսպարվել մինչև ցնցումների ավարտը, ձեռքի տակ ունենալ պայուսակ՝ առաջին բուժօգնության դեղարկղիկով, մի քանի օրվա սննդի պաշարով, գրպանի լապտերով, տաք հագուստով» և այլն:

Ուրեմն, հարգելի քաղաքացիներ, հյուր կամ աշխատանքի գնալիս, չմոռանաք հետևյալ վերցնել տաք հագուստ (անկախ ամառ է, թե ձմեռ), մի քանի օրվա սնունդ և գրպանի լապտերներ (վերջինիս դուք արդեն վարժվել եք): Հետո, երբ (Աստված չանի), երկրաշարժի հետևանքով մնաք ավերակների տակ, չմոռանաք տաք հագնվել, խնայողաբար օգտագործել սնունդը (գերադասելի է անել միայն նախաճաշ և ընթրիք), նույն ձևով՝ խնայողաբար օգտագործեք գրպանի լապտերը՝ պարզելու համար, թե դուք ինչպիսի՞ գրունտի տակ եք կամ որտե՞ղ եք և այդ մասին հայտնեք ձեր փրկարարներին: Այսպես, անվերջ կարելի է սրամտել և զավեշտի վերածել ամեն մի խորհուրդ: Իսկ զավեշտ չէ՞, արդյոք, որ ՍՊԱԾ-ը մեզ խորհուրդ է տալիս իմանալ, թե ինչ պետք է անել **երկրաշարժից առաջ**, կարծես ինքն, իրոք, կարող է գուշակել այդ աղետը, իսկ սեյսմիկ գոտու բնակչի համար տարվա 365 օրը «երկրաշարժից առաջ է»:

Բնակչության սեյսմիկ անվտանգության հարցերին մենք լուրջ ենք վերաբերում և դրա վկայությունն արդեն մեկ տարի մեր թերթի էջերում այդ թեմայի քննարկումն էր: Սեյսմիկ անվտանգության ամենակարևոր հարցը՝ հակասեյսմիկ, ամուր, տեխնիկապես ճիշտ շինարարությունն է, թեթև կոնստրուկցիաների օգտագործումը, շինանյութերի ընտրության, հարկերի բարձրացման, երկրաբանական հետախուզության ճիշտ հաշվարկն է: Չէ՞ որ մեզ հայտնի է, որ անբարեխղճությունը, իրենց պարտականությունների կատարման գործում տգիտության, անհիրաժեշտության դրսևորման պատճառով ամբողջ թաղամասեր են կառուցում սողանքների վրա, երկրաբանական խրզվածքների տեղանքում և նույնիսկ, «նախկին» հրաբխի խառնարանում...

Ու թեև այս հարցերի երկու հակադիր կարծիքներ բանավեճը մենք ավարտում ենք, սակայն, թերթի էջերը հյուրընկալորեն սպասում են խելացի, գիտականորեն հիմնավորված մտքերի, խոսքի:

Նաև ասենք, որ ուրախ կլինեինք, եթե մեր հրապարակված մեծաքանակ նյութերը քննության հարց դառնային ՀՀ ԳԱԱ երկրի մասին գիտության պրոբլեմային գիտական խորհրդում՝ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ, մոռանալով անձնական ամբիցիաներն ու վիրավորանքները, քանի որ խոսքն առավել կարևոր հարցի մասին է՝ մեր ժողովրդի անվտանգության մասին:

Կորցնում ենք այն, ինչով հպարտանում էինք

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որը դասակարգվում են՝ սեռական, ճանաչման, տագնապի, հավաքի, հետքի, ձվադրման տեղի և այլն: Բույսերի պաշտպանության խնդիրը առաջատար երկրներում փորձում են իրականացնել հիմնականում սեռական ֆերոմոնների միջոցով, որոնք օգտագործվում են վնասատուի հակառակ սեռի ներկայացուցիչներին գրավելու և ապա ոչնչացնելու համար: Եվ իրոք, միջատների սինթետիկ սեռական ֆերոմոնները դառնում են բույսերի պաշտպանության կարեվոր մեթոդներից մեկը: Նախ՝ դրանց օգնությամբ հայտնաբերում են վնասատուներին, ապա որոշում են տարածվածության, հետևապես և վարակվածության աստիճանը, այնուհետև քիմիական պայքարի ճշգրիտ ժամկետները: Ֆերոմոնների օգտագործման այս ձևը անվանում են **ազդանշանային մեթոդ:** Վերջին տարիներին կիրառվող պայքարի ֆերոմոնային մյուս եղանակներից են՝ **արուների վակուումի**, ապա **ապակողմնորոշման մեթոդները:** Վերջին երկուսի կիրառումը թույլ է տալիս վնասատուի դեմ պայքարել առանց թունաքիմիկատների օգտագործման, հետևապես և առանց վնաս հասցնելու շրջակա միջավայրին: Այսօր լաբորատորիաներում սինթեզված ֆերոմոնների կիրառությունը դաշտերում և այգիներում մեծ արդյունքների են հասցրել ամբողջ աշխարհում: Եթե 1965 թ. հայտնի էին միայն երեք վնասատուների ֆերոմոններ, 1972-ին՝ 37, այսօր արդեն մոտ 250 վնասատուների սեռական ֆերոմոններ են անջատել, պարզել դրանց կառուցը և մեծ մասը սինթեզել լաբորատորիաներում:

Երբ սինթեզվեցին առաջին ֆերոմոնները, մեր հայ գիտնականների մեջ միտք հղացավ անմասն չմնալ սույն համաշխարհային գործընթացից և օգտագործելով ՀՀ ԳԱԱ օրգանական քիմիայի ինստիտուտի մեթոդական բազան ու երիտասարդ քիմիկոսների հնարավորությունները՝ մեր ներդրումն ունենալ ինչպես մարդկությանը սպառնացող էկոլոգիական աղետի, այնպես էլ գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի գործում:

Ահա թե ինչու, դեռ 1977 թ. այդ լուրջ գործը կազմակերպելու նպատակով, փորձ արվեց լրացուցիչ ֆինանսավորում ստանալ նախկին Խորհրդային Միության գիտության և տեխնիկայի կոմիտեից: Մեր փաստարկները համոզիչ էին: Վճռական նշանակություն ունեցավ նաև քիմիկոսների հայկական դպրոցի բարձր հեղինակությունը: Մեզ հատկացվեցին ֆինանսական միջոցներ, և 1977—1979 թթ. Հայաստանում պատրաստվեցին գիտնականներ, որոնք կարող էին աշխատել աչքի համար աննկատ քանակի քիմիական միացությունների հետ: Շատ շուտով «Ֆերոմոնների ստեղծման մեթոդների մշակումը և օգտագործումը» թեման դարձավ նախկին ԽՍՀՄ միութենական համալիր ծրագրի բաղկացուցիչ մասը: Այնուհետև այդ նույն գիտության և տեխնիկայի կոմիտեի կողմից տրամադրվեցին լրացուցիչ գումարներ՝ 1980—1985 թթ. և ապա՝ 1986—1990 թթ. համար:

«Բույսերի պաշտպանության էկոլոգիապես անվտանգ միջոցների ստեղծում» թեման, որը տարվում էր օրգանական քիմիայի ինստիտուտում, որպես մի խոշոր բաժին մտավ նախկին ԽՍՀՄ-ի միութենական գիտատեխնիկական առաջնային երկու ծրագրերի մեջ և լայն թափ առավ: Այսպես, 1981—1985 թթ. «Արարատ» անունով սինթեզվեցին խաղողի ողկույզակերի սեռական ֆերոմոնի բազմաթիվ նմուշներ: Հայաստանում, Վրաստանում, Կրասնոդարի երկրամասում և այլ տարածքներում կատարված փորձարկումների արդյունքներից ելնելով, ԽՍՀՄ ֆարմկոմիտեն առաջարկեց այն ներդնել այգիների պաշտպանությունը կազմակերպելու համար: Հայաստանի գյուղատնտեսության նախարարության որոշմամբ, 1986 թ. «Արարատ» մակնիշի դեղամիջոցը սկսեց կիրառվել հանրապետության խաղողագործական բոլոր շրջաններում՝ ողկույզակերի թռիչքի ընթացքը և ինտենսիվությունը որոշելու և քիմիական պայքարի արդյունավետ ժամկետները սահմանելու համար:

Փաստորեն սա դրա կիրառությունն էր որպես **ազդանշանի մեթոդ:**

Մարդկանց և բնության համար չափազանց վտանգավոր թունաքիմիկատների օգտագործումը սահմանափակելու, խաղողի ողկույզակերով թույլ աստիճանի վարակված այգիներում թունաքիմիկատների կիրառությունը իսպառ վերացնելու նպատակով, 1986 թ. հանրապետությունում լայն կեղպով սկսվեց կիրառվել պայքարի արուների զանգվածային հավաքի և ոչնչացման **(արուների վակուումի)**, ապա նաև **արուների ապակողմնորոշման մեթոդները:** Հետագա երեք տարիների ընթացքում պայքարի այս արդյունավետ եղանակը հանրապետության այգեգործական տընտեսություններում կիրառվել է ամեն տարի՝ ավելի քան 20 հազար հեկտար խաղողի բերքատու այգիներում: Բույսերի պաշտպանության ինստիտուտի և հանրապետության ագրոարդի գյուղատընտեսության էկոնոմիկայի ինստիտուտի հաշվարկների համաձայն, «Արարատ» մակնիշի ֆերոմոնի օգտագործումը հնարավորություն էր տալիս յուրաքանչյուր հեկտարի վրա ոչնչացումից փրկել տասնյակ հազարավոր ռուբլիների խաղողի բերք: Իսկ արուների վակուումի մեթոդի կիրառման շնորհիվ ոչնչացումից փրկված բերքի արժեքը մի քանի անգամ ավելի բարձը էր: Եթե սրան ավելացնենք վնասատուների դեմ տարվող բուն պայքարի էկոլոգիապես անվտանգ լինելը, ապա դրանցից ստացված եկամուտները կկազմեին միլիոնավոր ռուբլիներ:

Սակայն 1992 թ. սկսած, Հայաստանի Հանրապետության ֆինանսական սուղ պայմանների հետևանքով, այդ աշխատանքները մասամբ դադարեցվեցին և այսօր, ընդհանուր առմամբ, չափազանց դանդաղ են առաջ գնում:

Նման բախտի արժանացան նաև օրգանական քիմիայի ինստիտուտի և հանրապետության գյուղատնտեսության նախարարության բույսերի պաշտպանության ինստիտուտի կողմից ստեղծված մեկ այլ վնասատուի՝ խնձորի պտղակերի, ֆերոմոնալ դեղամիջոցները, որոնք այն ժամանակ իրենց որակով գերազանցում էին մինչ այդ կիրառության մեջ եղած և զարգացած երկրներում երբևէ ընտեղծված բոլոր նմուշներին:

Չնայած մեծ դժվարություններին, այսօր, այնուամենայնիվ, գիտահետազոտական աշխատանքներ են տարվում գյուղատնտեսության տարբեր տեսակի վնասատուների սեռական ֆերոմոնների լաբորատոր սինթեզի և դրանց հիման վրա ստեղծված միջոցները դաշտերում և այգիներում օգտագործելու ուղղությամբ: Մասնավորապես ավարտվել կամ ավարտվում են աշնանացանի բվիկի, ճապոնական բզեզի, լոբու հատիկակերի, բացականչական բվիկի, լոլիկի ցեցի, մաշկաթև նավավարի, սևապոչ եղջերուի սեռական ֆերոմոնների սինթեզի աշխատանքները:

Սակայն ո՞վ է կազմակերպելու դրանց փորձարկման, ներդրման գործը: Գուցե՞ վերևում նշված ինստիտուտները, բայց ի՞նչ միջոցներով: Չեռներեց մարդի՞կ, սակայն ինչպե՞ս: Արդյունքում կորչում է մտքի և ուժերի ահռելի լարումով ստեղծված այդ լուրջ գործը, ցրվում են էլ ավելի մեծ ջանքերով պատրաստված կադրերը, հոդս է ցնդում մի ամբողջ սերնդի ստեղծագործական երկունքի գնով ձեռք բերված: Իսկ դրանց հեղինակները՝ քիմիական գիտությունների դոկտորներ և թեկնածուներ, այսօր համալրում են Ամերիկայի Միացյալ Նահանգների քիմիկոսների առանց այն էլ հզոր բանակը: ԱՄՆ-ը տեղ և ամբիոն է հատկացնում Հայաստանի բուհերում ուսանած, գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտում թրծված ու ձևավորված քիմիկոսներին՝ վերջիններիս մտավոր և գիտական բարձր արժեքների համար: Եվ ինչո՞ւ միայն նրանց: Չէի ցանկանա թվարկել անուններ, բայց ցավով ուզում եմ նշել, որ նման անելանելի վիճակում են շատ-շատերը՝ ո՞ւմ դիմել, ի՞նչ անել... Անլուծելի հարցերի շարան, որոնց պատասխանը հայտնի չէ: Եվ հիմա պատկերացրեք այդ ամենը նախաձեռնողի և ստեղծողի վիճակը, որը կորցնում է այն, ինչով հպարտանում էր քիմիական աշխարհի առջև...

...Այն, ինչի մասին ասվեց վերևում, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտում կատարվող գիտահետազոտական աշխատանքների մի մասն է միայն: Եվ ինչ ասվեց մասնակիի վերաբերյալ, ընդհանուր և ճշմարիտ է ամբողջ համակարգի համար...

Շալիկո ԲԱԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս



Ախալցխայի Ծուղրութ գյուղի բնակիչների նախահայրերը թեև այս վայրերը են գաղթել 1828—30-ական թվականներին, բայց այսօրվա գյուղի կենտրոնում, բարձր մի բլրի վրա տեսել են դեռ միջին դարերում կառուցված հայ եկեղեցու ավերակներ: Ջավախքի պատմա-մշակութային հուշարձանները ամենից քիչ են ուսումնասիրված: Այդ հուշարձաններից մեկն էլ ահա այս՝ ս. Գևորգ եկեղեցին է: Հինավուրց խաչքարերը, հայերեն արձանագրությունները, նաև մյուս երեք բլուրների վրա կառուցված եկեղեցիները սպասում են իրենց հետազոտողներին: Եվ քանի որ նրանց տեսադաշտից առայժմ հեռու են այդ հուշարձաններն ու Ծուղրութի պատմական մյուս արժեքները, մեր աշխատակից Արամ Վարդանյանը բավարարվում է ընթերցողներին ներկայացնելով ահա այս քանդակի մի բեկորը և սույն հաղորդագրությունը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Թույլ տվեք Ձեր թերթի միջոցով շնորհակալություն հայտնել ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանին՝ ակադեմիայի համակարգի աշխատողների ընկատմամբ ցուցաբերած հոգատարության համար:

Արդեն երկրորդ անգամ ակադեմիայի համակարգի աշխատողներն օգտվում են պարոն Մելիքյանին արտասահմանից մարդասիրական օգնության նպատակով ուղարկած ապրանքներից:

Համոզված են, որ այդ բարի վերաբերմունքը կշարունակվի:

Կ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ միացյալ արհկոմի նախագահ

Փակենք աղետի դռները

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տացավ գաղթել հայրենի երկրից, իր հետ տանելով 30 հազար հայ բնակչություն:

Միջնադարյան պատմիչ Մատթէոս Ուռհայեցին իրավունք ուներ գրելու, որ «անհետացավ աշխարհն հայոց ի թագավորաց իշխանաց», որովհետև կատարվում էր ոչ թե սովորական գաղթ, այլ ավելի սարսափելի բան՝ երկրից հեռանում էր կազմակերպված իշխանությունը: Երկիրը զրկվում էր հայ ժողովրդի թվական գերազանցությունից:

16-րդ դարից սկսած, երբ Հայաստանը երկարատև պատերազմներից հետո բաժանվեց շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի միջև, բռնի գաղթը, երկրի հայաթափումը դարձավ զավթիչների պետական քաղաքականության բաղկացուցիչ մասը: Նրանց հաջողվեց նույնիսկ զգալիորեն պակասեցնել հայ բնակչության թիվը Արարատյան դաշտում: Լքված ու դատարկված բնակավայրերը անցնում էին մահմեդական բնակչության ձեռքը:

Սակայն բռնագաղթած հայերը չէին կորցնում հայրենիք վերադառնալու հույսը, որը որպես սուրբ պարտք, փոխանցվում էր սերնդե-սերունդ:

Այդ հույսը իրական դարձավ 19-րդ դարի սկզբին տեղի ունեցած ռուս-պարսկական (1826—1828 թթ.) երկրորդ և ռուս-թուրքական (1828—1829 թվականներ) երկրորդ պատերազմներում Ռուսաստանի տարած հաղթանակների շնորհիվ:

Թուրքմենչայի պայմանագրով պարսկահայերին իրավունք տրվեց վերադառնալ Ռուսաստանին միացված իրենց հայրենի երկիրը: Եվ այս ակտով մեր պատմության մեջ առաջին անգամ կազմակերպվեց հայրենադարձություն:

Առաջին հայրենադարձության գաղափարակիրն ու կազմակերպիչը դարձավ հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, բոցաշունչ հայրենասեր Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին: Դժվար, անչափ դժվար էր հայրենիք վերադարձող հայերի վիճակը: Անգլիացիների խորհրդով պարսիկ իշխանությունները արգելել էին գնել գաղթող հայերի անշարժ գույքը: Ինչո՞ւ գնել, ասում էին նրանք, հայերը, միևնույնն է, գնալու են՝ թողնելով իրենց տները, այգիները, ջրաղացները և այլն:

Փաստորեն հայրենիք վերադարձողները գալիս էին դատարկ ձեռքով: Եթե ավելացնենք, որ նրանց համար չկային կենցաղային տարրական պայմաններ, պատկերը պարզ կլինի: Ռուս մեծ գրող, հայ ժողովրդի հայրենադարձության կազմակերպիչներից մեկը՝ Ալեքսանդր Գրիբոեդովը, իր նամակներից մեկում գրում է. «Մեր կողմն են անցել մոտ 8 հազար հայ ընտանիք և ես այժմ նրանց թողած գույքի համար գիշեր-ցերեկ հանգիստ չունեմ, պաշտպանում եմ նրանց հարստությունը և նույնիսկ եկամուտները, մի խոսքով գեթ մի բան արվում է»:

Առաջին մեծ հայրենադարձությունը ունեցավ հսկայական նշանակություն: Այն մեծապես նպաստեց Արևելյան Հայաստանից նախկինում բռնագաղթած հայ բնակչության վերադարձին և նրա թվական կազմի ավելացմանը:

Այն նաև անգնահատելի եղավ այստեղ ապրող ժողովրդի մի զգալի հատվածին հետագա ֆիզիկական բնաջնջումից փրկելու գործում:

Այս իրողությունն իր ամբողջությամբ ավելի է առանձնանում 1915 թ. Հայոց մեծ եղեռնասպանության փաստի առկայությամբ:

Դարասկզբին հայ ժողովրդին հասած այդ ծանր ողբերգությունը, սակայն, անկարող եղավ սպառել հայության ոգին ու կամքը: Ժողովուրդը համազգային ողբերգությունից դուրս գալու ուժ գտավ, բուժեց իր վերքերը և ստեղծեց շեն ու հզոր հայրենիք, որը դարձավ համայն հայության ազգային հպարտությունը:

Մեր դարի 20—30-ական թվականներից հնարավորություն ստեղծվեց նոր հայրենադարձության կազմակերպման համար: Հայրենիք վերադարձավ 75 հազար մարդ: Սակայն, դժբախտաբար, այն հընարավոր չեղավ ավելի ծավալել:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո Հայաստանի ղեկավարությունը ձեռնարկեց նոր հայրենադարձության կազմակերպումը, իսկ 1945 թ. նոյեմբերին ԽՍՀՄ Միգիտարների խորհուրդը որոշում ընդունեց հայերի հայրենադարձությունը կազմակերպելու մասին: Հայաստանում ստեղծվեց ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե:

1946 թ. հուլիսին սկսվեց մեր պատմության մեջ իր ծավալով երկրորդ խոշոր հայրենադարձությունը: Առաջին քարավանը եկավ Բեյրութից: Հետո հաջորդեցին հայրենիք վերադարձող քարավանները Սիրիայից, Իրաքից, Իրանից, Հունաստանից, Եգիպտոսից, Բուլղարիայից, Ֆրանսիայից և այլ երկրներից: Հայրենիք վերադարձավ 100 հազարից ավելի հայ:

1946—1947 թթ. սկսած երկրորդ մեծ հայրենադարձությունը հսկայական նշանակություն ունեցավ:

Բայց այսօր հիշելով այդ խոշոր իրադարձությունը, հարկ ենք համարում խոսել նաև մի տհաճ երևույթի մասին:

Հայրենադարձները Հայաստան էին եկել այլ երկրներից, մինչդեռ հայրենիքում նրանց համար անծանոթ սոցիալ-քաղաքական կարգեր էին: Ազատ ձեռներեցության, առևտրի, մասնավոր սեփականության սովոր մարդիկ ոչ միայն չկարողացան շատ կարճ ժամկետում հարմարվել նոր կարգերին, այլև նրանց նկատմամբ սկսեցին կիրառվել օրենքի խստությունները՝ «սպեկուլյացիայի, պետական միջոցների յուրացման, խորթ բարքերի» ու այլևայլ մեղադրանքներով:

Հայրենադարձների մեծ մասը, խիստ հիասթափված ու աճաբեկված, մնաց մեկուսացված ժողովրդից, ու նրանց համար աշխատանքն ու ազատությունը, հայրենիքն ու հայրենադարձությունը դարձան իրենց բնակարանը, կամ լավագույն դեպքում՝ բախտակիցներով բնակեցված շենքը:

Հայրենադարձների հետագա տերունդները մեծամասամբ ձերբազատվեցին այդ բարդույթներից, բայց, դժբախտաբար, վիրավորանքի սպին իրեն զգացնել էր տալիս, չնայած մեղմացել էին և սոցիալիստական արգելքներն ու պատժամիջոցները:

Ենթադրում եմ, որ ընթերցողներից ոմանք գուցե և տրակուսեն, թե այս ամենի մասին հիշելու կամ գրելու ի՞նչ անհրաժեշտություն կա: Կա: Եվ դա մեզ թելադրում է տագնապալի մի երևույթ, որը և այս հոդվածը գրելու հիմնական շարժառիթն է:

Այսօր պաշտոնական տվյալներով, Հայաստանից հեռացել է 700 հազար մարդ: Ոմանք այս թիվը շատ հանգիստ են արտասանում: Բայց այդ 700 հազարը (իսկ իրականում ավելի շատ) գնացել են Հայաստանից, հայրենիքից, որտեղ կաթիլ առ կաթիլ, հավաքվել էր հայոց ազգային գենոֆոնդը: Այսօր մենք կորցնում ենք այն: Եվ սա դեռ բոլորը չէ: Հայաստանը զրկվում է աշխատուժից: Իսկ ամեն մի երկիր, եթե ուզում է, ինչպես ասում են, ոտքի վրա մնալ ու չճզմվել, պարտավոր է հոգ տանել իր աշխատուժի պահպանման մասին:

Հիշենք մի տխուր իրողություն: Սփյուռքը առաջացավ օտար նվաճողների գործադրած բռնությունների հետևանքով: Իսկ այսօր կատարվում է հակաբնական մի երևույթ: Պետականություն ունեցող Հայաստանը նպաստում է սփյուռքի մեծացմանը: Սա արդեն մեր առջև բացել է համազգային աղետի դռները: Ո՞վ պետք է այն փակի: Իհարկե՝, Հայաստանի պետությունը:

Գիտենք նաև, որ Հայաստանի պետության առջև ծառացած են բազմաթիվ բարդ ու դժվար խնդիրներ: Բայց ո՞վ ասաց, որ ազգային գենոֆոնդի պահպանումը ամեն մի պետության գլխավոր խնդիրը չէ:

Այստեղ կամենում ենք ավարտել մեր խոսքը, մեկ անգամ էլ ընդգծելով, որ մեծագույն դժվարությունների ու զրկանքների գնով մեզ հաջողվել է մի տանիքի տակ հավաքել 3,5 միլիոն հայ:

Եվ եթե այսօր, հրատապ միջոցներով չամրապնդենք մեր տանիքը, վաղը շատ ուշ կլինի:

Վլադիմիր ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԱՌԱՋԻՆ, ՀԱՍՏԱՏ ՔԱՅԼԵՐԸ

ՀՊՀ ՌԻԳԸ անդամները համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի հետ:

Հաշվապահական լեզվով ասած՝ համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը անցկացրել է 1000 գիտաժողով ու կոնֆերանս: Շա՞տ է, թե քի՞չ... քանակը կարևոր չէ: Կարևորն այն է, որ Երևանի պետական համալսարանի և նրա ուսանողական գիտական ընկերության վաստակի չափանիշը հանրապետության այսօրվա գիտական ներուժն է, որի համբավը, իրոք, միջազգային է: Այստեղ՝ համալսարանի ուսանողական ճստարանից սկսած, երիտասարդները գիտական աշխատանքի առաջին քայլերն են կատարում, սովորում ինքնուրույն աշխատել գրքի վրա, վերլուծել, քննադատաբար հասկանալ ու ընկալել կարդացածը: Այստեղ է ուսանողը առաջին անգամ «հանրահայտ ճշմարտությունները» սերտելիս ինքն իրեն հարցնում՝ մի՞թե դա այդպես է: Այդ առաջին հարցով էլ սկսվում է դեպի գիտության բարդ, խորը աշխարհը նրա երթը:

Իսկ 1989 թվականին գիտական ընկերությունը դադարեց գոյություն ունենալուց: Գոյալալքարի այլ ժամանակներ էին ու այլ հորիզոններ: Ու թվում էր, թե ճգնաժամի ու անորոշության ճիրաններում դրվելու էր վերջակետ: Բայց ահա, եկող տարի անց, ուսանողների ջանքերով, համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի նախաձեռնությամբ ու օգնությամբ, ուսանողական գիտական ընկերությունն ապրեց իր երկրորդ ծնունդը:

Բայց ընդունենք, որ դա նոր ծնունդ չէր, այլ մեծ երթի շարունակությունը: Ի վերջո, ի՞նչ է պատմության համար երկամյա ընդհատումը: Երթ, որտեղ ուսանողը ստուգում է ինքնն իրեն, դրսևորման ոլորտներ փնտրում, ինքնահաստատման մեծ ղպրոց անցնում: Եվ չնայած վերջին տարիներին ընդհանրապես ընկել է գիտության վարկը, բայց ուրախությամբ ասենք, որ համալսարանի ուսանողների մոտ գիտական փորձ, հետազոտական աշխատանք կատարելը դարձել է անհրաժեշտություն: Ուսանողական կյանքի, կրթական համակարգի առաջին հայացքից ընդհանուր գորշության ֆոնի վրա այդ ամենը հատկապես կարևորվում է, արժեքավորվում:

Պատկառելի են թեմաները թե՛ ծավալային իմաստով, և թե՛ բովանդակությամբ. «Երկրորդային քվանտացում», «Գրավիտացիոն ոսպնյակներ», «Լազերային ջերմամիջուկային սինթեզ», «Ժամանակակից երկրաչափության հարցեր» և այլն:

Հումանիտար ֆակուլտետների ուսանողների մոտ նկատվում է հետաքրքրությունը հասարակական գործընթացների, հայ ժողովրդի ու հանրապետության նորագույն պատմության նկատմամբ: Մինչդեռ հայտնի է, որ հատկապես այս բնագավառներին անդրադառնալը դյուրին գործ չէ: Շատ երևույթներ, հասարակական-քաղաքական անցուդարձեր դեռ իրենց իմաստավորումն ու ճշմարտացի արտահայտությունը պետք է գտնեն, որ հետո գա գնահատման ու արժեքավորման ժամանակը: Իսկ ուսանող-գիտնականներն արդեն լուրջ հայտ են ներկայացնում այդ ասպարեզում ևս: Ռոմանոգերմանական ֆակուլտետի ՌԻԳ ընկերությունը կազմակերպել է սեմինար «Ֆրանսիա. պայքար ներգաղթի դեմ» թեմայով, ապագա իրավաբաններին հուզում էին «Շրջակա բնական միջավայրի պաշտպանության և վերարտադրության իրավական հիմնահարցերը»: Հատուկ հրատապություն և խորություն էր բովանդակում պատմության ֆակուլտետի ՌԻԳԸ կողմից կազմակերպված «Հայաստանի Հանրապետությունը հինգ տարեկան է» թեմայով գիտաժողովը:

Ասպիրանտ և ուսանող հետազոտողներն անդրադառնել են փախստականների ադապտացիայի, հայ-ռուսական արդի հարաբերությունների հարցերին: Բնականաբար նրանք չեն մոռացել նաև Հայ դատի հարցերը:

Փախստականները 20-րդ դարի վերջի ամենատխուր երևույթներից է: Միլիոնավոր մարդիկ, պատերազմների, սովի, համաճարակների հետևանքով, ստիպված լքում են իրենց բնակավայրերը: Հոգեբանական առումով դա ծանր, անցանկալի երևույթ է: Հայաստանում այժմ հարյուր-հազարների են հասնում հիմնականում Ադրբեջանից բռնագաղթվածները: Նրանք մարդիկ են, ովքեր զրկվել են տնից ու ունեցվածքից և ապրելու առանց որևէ միջոցի փրկվել են Հայաստանում: Ու թեև իշխանությունները և ՄԱԿ-ի փախստականների գլխավոր հանձնակատարի Հայաստանի ներկայացուցչությունը [illegible] ինչ անում են թեթևացնելու նրանց հոգսերը, բայց առավել դժվար խնդիր է հոգեբանական հարմարվողականության՝ ադապտացիայի հարցը: Հարմարվել նոր պայմաններին, բռնադատվածի կարգավիճակին, նոր միջավայրին, կենցաղին, սովորույթներին: Ահա խնդիրների համակարգը, որը քննության են առնում ուսանող-հետազոտողները:

Երեք կարգի փախստականներ կան Հայաստանում: Մարդիկ, ովքեր դեռ ժամանակավոր կացարաններում են (հյուրանոց, պանսիոնատ, գիշերօթիկ), մարդիկ, ովքեր ստեղծել են իրենց համայնքները (լքված գյուղերի վերականգնում, փոքր ավան-բնակավայրերի ստեղծում), ունեն փոքր հողակտորներ, ստեղծում են տնտեսություն: Բայց բռնադատվածների մեջ կան և երրորդ կարգի մարդիկ, ովքեր չունեն ոչինչ, ովքեր իրենց գոյությունը պահպանելու համար դիմել են հանցագործության ու հանգրվանել՝ բանտերում: Ահա այս 3 կարգի փախստականները կարոտ են երեք տարբեր մոտեցման և, բնականաբար, հասարակության ջանքերը ևս միանշանակ ու միատարր լինել չեն կարող:

Երևանի պետական համալսարանի ՌԻԳ ընկերությունը ընդարձակում է իր գործունեության ոլորտը, ջանքեր թափում ամրապնդել համագործակցությունը մյուս բուհերի, արտասահմանյան համալսարանների և հիմնադրամների հետ: Գաղտնիք չէ, որ թեև մենք թևակոխում ենք 21-րդ դար, մեր գիտահետազոտական աշխատանքում քիչ են օգտագործվում գիտատեխնիկական նվաճումները: Այսօր շատ դժվար է պատկերացնել համալսարանականին, ասպիրանտին, որը նաև գիտական գործունեությամբ է զբաղվում, որը, սակայն, աշխատում է համարյա կտրված համաշխարհային տեղեկատվությունից, առանց համակարգիչների, հնարավորություն չունենալով ծանոթանալ իր թեմային վերաբերող համաշխարհային գրականությանը: Գործին մեծապես կօգնի համալսարանի համակարգչային նոր կենտրոնն ու Ինտերնետ համակարգին միանալու հանգամանքը: Այժմ ուսանողները հընարավորություն ունեն օգտվելու այդ կենտրոնից:

Ուսանողական գիտական ընկերությունը ուսանողական ինքնակառավարման կարևոր օղակներից է, այն ուսանողին հնարավորություն է տալիս (և նաև սովորեցնում է) ուսումնառության տարիներից կապվել գիտության հետ, հետազոտական ինքնուրույն աշխատանքի փորձ կուտակել: Իհարկե, կրկնակի ուրախալի է, երբ այդ փորձի ժամանակ ծնվում են և գիտատեխնիկական, արժեք ներկայացնող թեմաներ, մտքեր, ծրագրեր: Ու հարկ է, որ այդ ամենի մասին լինի լայն հրապարակայնություն, քանի որ չկա առաջընթաց ու զարգացում, առանց կարծիքի ու տեսակետների բախման, բանավեճի, լայն տեղեկատվության: Մեր թերթը պատրաստ է իր էջերում լայնորեն տեղ տալ ուսանողական գիտական որոնումներին, պրպտումներին, խոսքին: Ուրեմն ՌԻԳ ընկերությունների մասին մեր այս հրապարակումը համարենք նաև յուրահատուկ հրավեր՝ մեր համատեղ քայլերի, հաջորդ հրապարակումների համար:

Արամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Նույնիսկ ազատ մամուլում ամեն ինչ թույլատրելի չէ

Ես թերթերի հետևողական ընթերցող չեմ: Բայց մասնագիտությանս մղումով լեզվին վերաբերող հոդվածները կարդում եմ: «Գիտություն» թերթում կարդացի Լևոն Հախվերդյանի այն ելույթի վերարտադրությունը, որ նա ունեցել է ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովում: Թեև խիստ, բայց ճշմարտացի ելույթ, որ սուր ծայրով ուղղված էր լեզվական ծայրահեղ մաքրամոլության, օտար բառերի տգեղ ու տձև հայացումների (օրինակ՝ աֆորիզմ-վնռակ), գործող ուղղագրությունը փոխելու հանցավոր, ժողովրդին դեպի անգրագիտություն տանող մտումների և այս ամենի դրոշակակիր լեզվի պետական տեսչության դեմ: Ասված են բաներ, միանգամայն կիրթ ու արտացավ, որոնց համամիտ են մեր լեզվաբաններն իրենց մեծագույն մասով, լեզվի դասախոսները և ուսուցիչները՝ անխտիր:

Կարդացի այդ ելույթի դեմ հրապարակված նյութերը նույնպես: Կարդացի և մնացի զարմացած, թե ինչպե՞ս կարելի է լինել այդքան աչառու: Այն ատիճան, որ տեսչության պետ Վալերի Միրզոյանն իր հաստատության աշխատանքը համարում է «վիթխարածավալ», «ազգային-պետական բացառիկ կարևորության գործառույթներ իրականացնող» և իրենց կազմակերպած լեզվի դասընթացներին հրավիրում է «լրագրողներին և... լեզվագետ ակադեմիկոսներին», այսինքն՝ Գևորգ Ջահուկյանին և Սերգեյ Արքահամյանին (լեզվագետ ակադեմիկոսներն այս երկուսն են): Նա վրդովմունք է հայտնել, որ ակադեմիկոսներն իրենց հետ համագործակցելու փոխարեն, նախընտրում են «հիմարություններ ասել տարբեր ամբիոններից»: Ակադեմիկոսների հասցեին ավելի վիրավորական բան էլ է ասում տեսչության պետը. «...դոյարներ չենք ստանում, արտասահման չենք գնում ողորմություն խընդրելու որոշ շրջագայող ակադեմիկոսների պես»: («Ազգ», 22 ապրիլի, 1997):

Ավելի ևս անպարկեշտ է նույն տեսչության պետի հոդվածը՝ հրապարակված «Երեկոյան Երևան» թերթում (24 ապրիլի, 1997): Այստեղ Լ. Հախվերդյանի ելույթին տրված են այնպիսի որակումներ, որ չենք էլ ուզում վերարտադրել՝ էլ «արյունարբու», է՛լ «հիտերիկ», է՛լ «ստահոդ», է՛լ «ծաղրածուին պատիվ բերող կատարում» և այլն, և այլն:

Լ. Հախվերդյանի բանիմաց ելույթը լսողներից կամ նրան ճանաչողներից ո՞վ կարող է այս որակումներին համամիտ լինել: Ո՛չ ոք:

Տեսչության պետը Լ. Հախվերդյանին ներկայացնում է որպես սփյուռքում ալնվերջ շրջաջայող: Կարելի՞ է այդպես ասել մի մարդու մասին, որ վերջին 7 տարում միայն մի անգամ է եղել սփյուռքում: Բայց մեծ զրպարտությունը դեռ առջևում է: Դու մի ասի Լ. Հախվերդյանը նսեմացնում է արևմտահայերենը, վատաբանում է սփյուռքը, մինչդեռ նա հայտնի է իր ծնրադիր սիրով արևմտահայ լեզվի և ընդհանրապես սփյուռքահայ ժամանակակից մշակույթի նկատմամբ: Մի՞թե հոդվածագիրը սփյուռքահայ գրողների և մշակույթի մասին Լ. Հախվերդյանի բազմաթիվ հոդվածները չի կարդացել, ելույթները չի լսել:

Սա դեռ բոլորը չէ: Պետական տեսչության պետը Լ. Հախվերդյանին համարում է «լեզվազգացողությունից զուրկ ակադեմիկոս» և նրան դիմում է այսպես. «Դուք ամեն ինչ ստացել եք, փոխարենը ոչինչ չտալով, բացի աղմկարարությունից և լեզվի ճշմարիտ պաշտպաններից (այսինքն՝ իրենց.— Մ. Ա.) վատաբանելուց»:

Սա արդեն չափից դուրս է: Հախվերդյանը հեղինակն է ավելի քան երեսուն գրքերի, որոնք լավ ընդունելություն են գտել հատկապես օրինակելի հայերենի շնորհիվ: Լեզվի տեսչության պետը եթե դրանք չի կարդացել, ապա պաշտոնի բերումով գոնե պետք է ծանոթ լիներ նրա «Զրույցներ լեզվի մասին» գրքին, որ երբեք հրատարակություն է ունեցել և արժանացել բարձր գնահատության թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում: Ապացույցները շատ են: Ես գիտեմ, որ այդ գիրքը դպրոցներում օգտագործվում է դասագրքի պես: Ես էլ, իբրև համալսարանի լեզվի դասախոս, օգտագործում եմ նաև այդ գիրքը, որ ուսանողներին ճշմարիտ բավականություն է պատճառում: Կարելի՞ է այս գրքի հեղինակին կոչել «լեզվազգացողությունից զուրկ ակադեմիկոս»:

Թվում էր ինձ, թե սրանից ավելի անարդար ոչինչ չէր կարելի գրել Լ. Հախվերդյանի մասին: Բայց սխալվում էի: Մի քանի օր անց, ինձ ցույց տվին «Երևանյան օրեր» թերթը (№ 24, 1997 թ.), որի մեջ կարդացի ավելի ևս գռեհիկ մի հոդված՝ «Ակադեմիկոսական պայծառատեսություն» վերնագրով, Հայկ Զովունու ստորագրությամբ:

Այստեղ նախ Լ. Հախվերդյանի ելույթը որակվում է որպես «յալանչիական», ապա հայտնվում է, որ այդ ելույթում լեզվի պետական տեսչությունը մեղադրվել է «2 ծանրագույն հանցանքի՝ լեզվական պուրիզմի (մաքրամոլության) և ուղղագրության խնդրում հակախորհրդային (այսինքն՝ հակասովետական) ուղղվածության համար»: Ճիշտ է, թեև վատ է գրված: Դա դեռ ոչինչ: Անտրամաբանն ու անհեթեթն ի՞նչն է, գիտե՞ք: Այս հոդվածի հեղինակը Լ. Հախվերդյանին մի կողմից բնութագրում է իբրև մաքրամոլության հակառակորդ, որ ճիշտն է, մյուս կողմից ներկայացնում պաշտպան այնպիսի այլանդակ, այնքան գռեհիկ հայացումների, որ անհարմար է թղթին հանձնել: Դրանցից և ոչ մեկը չի հիշվել ո՛չ վերոհիշյալ ելույթում, ո՛չ էլ որևէ տեղ: Ըստ երևույթին, Զովունին դրանք դուրս է բերել իր անմաքուր ներաշխարհից և վերագրել Լ. Հախվերդյանին:

Մի՞թե սա խայտառակություն չէ:

Կա՛նգ առեք, պարոնայք, ամո՛թ է:

Այսպես բանավիճել չի՛ կարելի:

Մայա ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.

Հարգելի պարոն Վալերի Միրզոյան. մեր հեռախոսազրույցի ժամանակ, երբ դուք ուզում էիք մեզ պարտադրել ձեր մտքերը, բացատրեցինք, որ «Գիտություն» թերթը հոդված չի տպագրել, այլ հրապարակել է ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի ելույթների շարադրանքը: «Երեկոյան Երևան» թերթում տպագրված ձեր հոդվածը դուք մեզ էլ չեք առաջարկել և չէիք էլ կարող այն առաջարկել հեռախոսով, հետևապես, մենք չենք մերժել չեղած հոդվածը: Իսկ եթե հոդվածը մենք ստանայինք, վըստահ եղեք, կօգտվեինք մեր խմբագրական իրավունքից և կհրաժարվեինք մամուլին ոչ վայել որոշ արտահայտություններից:

Մենք մնում ենք մեր սկզբունքին հավատարիմ. այո՛, պետք է բանավիճել, պետք է կարծիք հայտնել, բայց թերթը չպետք է օգտագործել հայհոյանքների համար: Ձեզ մի քիչ համեստություն ենք մաղթում, դիմացինի կարծիքը լսելու, հարգելու ունակություն: Մի չարաշահեք ձեր պաշտոնը՝ մամուլի տարբեր հրատարակություններում ձեր գույնը թափելու համար: Մեր թերթը պատրաստ է տպագրել ու տպագրում է լեզվի մասին տարբեր, երբեմն հակադիր կարծիքներ, բայց լեզվաշուուների մենք չենք մասնակցի:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի ներկայացուցչությունը քարի մշակման արտադրամաս նվիրեց Հրազդանի հատուկ ռեժիմի գաղութի կալանավորներին:

Ցեղասպանությունը և Հայաստանի քրեական օրենսդրությունը

ՄԱԿ-ը 1949 թ. դեկտեմբերի 9-ին ընդունեց «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և նրա պատժման մասին» կոնվենցիան, որը միջազգային իրավունքի տեսակետից տալիս էր ցեղասպանության բնորոշումը, այն գործողությունները, որոնց կատարումը դիտվում է որպես ցեղասպանություն, ինչպես նաև միջոցներ էր նախատեսում նրա կանխման և պատժելիության մասին:

Որակելով ցեղասպանությունը՝ կոնվենցիան ելնում է երևույթի նպատակներից և էությունից, այլ ոչ թե գործողության մասշտաբներից կամ զոհերի թվից:

Նախկին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1954 թ. միացավ այս կոնվենցիային՝ մեկ վերապահումով, որն էլ վերացվեց 1989 թ.: Միանալով կոնվենցիային՝ ԽՍՀՄ և նրա մեջ մտնող հանրապետությունների օրենսդրությունները պետք է համապատասխանեցվեին միջազգային դրույթներին, սակայն գաղափարական նկատառումներից ելնելով՝ ցեղասպանությունը որպես առանձին հանցակազմ չներառվեց քրեական օրենսդրությունների մեջ և այս հանցակազմը բացակայում է նաև ՀՀ քրեական գործող օրենսգրքում:

Ելնելով ՀՀ Ազգային ժողովի նոր քրեական օրենսգրքի ընդունման փաստից, կցանկանայի հայտնել մի շարք նկատառումներ, որոնք կարող են օգտակար լինել միջազգային կոնվենցիայի դրույթները մեր քրեական օրենսգրքում ներառելու ժամանակ:

Չնայած կոնվենցիան չի սահմանում այն պատժաչափերը, որոնք նախատեսված կլինեին ցեղասպանություն կատարողների, նրանց օժանդակողների, կազմակերպիչների և այս հոդվածով պատասխանատվության ենթակա այլ անձանց համար, սակայն կարելի է ենթադրել, որ կազմելով կոնվենցիան, ի նկատի է ունեցվել այն հանգամանքը, որ նա կարվի ազգային քրեական օրենսդրություններում:

Ազգային օրենսդրության մեջ, ըստ իս, պետք է հաշվի առնվեն նաև արարքի պատասխանատվությունը թե ծանրացնող, թե մեղմացնող հանգամանքները: Հարկավոր է նաև տարբերակում դնել հրաման կատարող զինվորականի և այդ հրամանը արձակողի միջև, չնայած որ հրաման կատարելը բոլոր դեպքերում կարող է դիտվել որպես արարքի նկատմամբ պատասխանատվությունը մեղմացնող, բայց ոչ այն վերացնող իրողություն: Այս հանգամանքը կարևոր է հաշվի առնել նաև՝ կապված հանցագործության կատարման եղանակների, ժամանակի, տեղի և այդ հանցագործությունը բնորոշող այլ պայմանների հետ:

Կոնվենցիայով միաժամանակ նախատեսված է, որ ի թիվս մարդկության և անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործությունների, ցեղասպանության դատապարտման համար որոշված չէ վաղեմության ժամկետ: Նկատի ունենալով, որ ցեղասպանության դատապարտումը մեզ համար նաև պատմական նշանակություն ունի, ազգային օրենսդրության մեջ պետք է սպառիչ կերպով թվարկել այն հանցագործությունները, որոնց կարևորությունից ելնելով, նրանց վրա չի տարածվում վաղեմության ժամկետը: Այս նորմը ևս ներառված է Ցեղասպանության մասին միջազգային կոնվենցիայում: Այս դրույթը իր գործնական կիրառումը գտավ Նյուրնբերգյան դատավարության ժամանակ, երբ նացիստները պատժվեցին հրեաների դեմ կատարած ցեղասպանության համար, հանցանքի կատարման պահին գոյություն չունեցող օրենքով:

Ճշմարիտ է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում պատժելի են համարվում նաև ՀՀ սահմաններից դուրս հանցագործություններ կատարած օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր մշտապես չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում, սակայն ՀՀ օրենքներով ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում: 1988 թ. փետրվարին Սումգայիթում, 1990 թ. հունվարին Բաքվում, Կիրովաբադում և հայաբնակ այլ վայրերում հայ ժողովրդի ներկայացուցիչների նկատմամբ գործադրված բռնարարքները, որոնք համապատասխանում են միջազգային իրավական նորմերով նախատեսված ցեղասպանություն որակմանը, պատժելի չեն մեր ազգային օրենսդրությամբ:

Որոշ երկրների թե՛ դատական պրակտիկան, թե՛ օրենսդրությունն ընդունում են այսպիսի մոտեցումը, որի համաձայն պետությունն իրավասու է որոշ հանցագործությունների կատարումը դիտելու իր տարածքում կատարած, եթե դրա հետևանքները առկա են այդ տարածքի վրա, անկախ հանցագործության կատարման վայրից: Այս սկզբունքը իր օրենսդրական ձևակերպումն է ստացել, մասնավորապես, ՀԺՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածում: Այս սկզբունքը իրականացվում է ԱՄՆ-ում: Այս իմաստով առավել ակնհայտ է պանամական ղեկավար Մ. Նորեգայի գործը, որը ինչպես հայտնի է մեղադրվում է թմրաթիզնեսի ռեկետի միջոցով ստացված փողերը կրկին շրջանառության մեջ դնելու և շահույթ ստանալու համար: Նորեգային առևանգեցին Պանամայից ԱՄՆ և դատապարտեցին ամերիկյան օրենքով: Ամերիկյան իրավունքի ինստիտուտը գտնում է, որ «Միջազգային իրավունքը ճանաչում է պետության իրավունքը պատժելու սահմանափակ հանցագործությունների համար, որոնք կատարվել են նրա տարածքից դուրս և տվյալ պետության քաղաքացի չհանդիսացող անձանց կողմից»: Ընդհանրացնելով վերոշարադրյալը, պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ պետությունը իրավասու է որոշ հանցագործությունների համար (որոնց ցանկը սպառիչ պետք է նախատեսված լինի օրենսդրությամբ) կիրառել պատժելիության «Էքստերիտորիալ» սկզբունքը: Եվ բոլոր այն դեպքերում, երբ միջազգային դատարանը չի քննի այդ գործերը կամ այդ անձանց պատժելիության հարցը չի կարգավորվի միջազգային պայմանագրերով, ապա ազգային դատարանները հնարավորություն կունենան պատասխանատվության ենթարկել վերոհիշյալ անձանց: Իհարկե, ցեղասպանության կատարման բնույթից կախված կարող են պատասխանատվության ենթարկվել ինչպես ֆիզիկական անձինք, այնպես էլ պետությունը: «Էքստերիտորիալության» սկզբունքը ցեղասպանության պարագայում պետք է կիրառվի միայն ֆիզիկական անձանց համար:

Վազգեն ԽԱՉԻԿՅԱՆ
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող, ՌԻԳԸ անդամ

ՀԱՍԱՐԱԿ

Որտեղի՞ց ենք մենք եկել...

«Որտեղի՞ց ենք մենք եկել։ Ո՞վ ենք մենք։ Ո՞ւր ենք մենք գնում։ Ահա այս հարցերն են, որ մենք՝ մեզ պիտի տանք,— այս գրքի առաջաբանում գրել է լրագրող Դոմինիկ Սիմոնենն։ Մինչև այսօր այս հարցերին փորձել էր պատասխանել միայն կրոնը։ Հիմա արդեն գիտությունը նույնպես վարկածներ է առաջարկում մեր ծագման մասին։ «Բիգ Բէնգից մինչև բանականության ծնունդը տիեզերքը միավորված է միասնական գործընթացով, որ մարդկային կյանքն է՝ «անվերջանալի տարեգրությունների շարքով»։ Իսկ սա նշանակում է, որ մեր տոհմածառը սկսվում է ոչ միայն կապիկներից և բակտերիաներից, այլև աստղերից ու գալակտիկաներից։

Մարդը աստղերից է սերվե՞լ։ Այս միտքն, անշուշտ, անսովոր է։ Պարզվում է, որ նա, ով իրեն միշտ համարել է աշխարհի կենտրոնը, ընդամենը տիեզերքի կազմակերպման գործընթացի վերջին արգասիքն է և ապրում է շատ աննշան մի մոլորակի վրա։

«Աշխարհի ամենագեղեցիկ պատմությունը. մեր ծագման գաղտնիքները» գրքում ամեն ինչ շաղկապված է իրար հետ։ Կրկին օրակարգի հարց դարձնելով աստվածաշնչյան և դիցաբանական պատումները, այն չի վիճարկում դրանց իսկությունը, այլ համադրում է գիտության վերջին տվյալների հետ։ Այստեղ մեր ակունքներին են անդրադառնում աստղաֆիզիկոսները, կենսաբանները, մարդաբանները և գիտության այլ ուղղությունների ներկայացուցիչներ։

Ահա թե ինչու, «Աշխարհի ամենագեղեցիկ պատմությունը» մեզ է ներկայանում որպես հափշտակիչ սյուժեով մի դրամայի բեմադրություն, երեք գործողությամբ՝ տիեզերք, կյանք, մարդ։ Իսկ դրամայի ամեն մի առանձին գործողությունն բաղկացած է 3 պատկերից, ուր զբաղված են այս ահռելի ստեղծագործության բոլոր գործող անձինք։ Գործող անձանց և ֆրանսիացի երեք խոշորագույն գիտնականների (Յուրեր Ռիվզ, Ժոյել դե Ռոսնե և Իվ. Կոպպենս) միջև սկսվում է երկխոսություն, որն իր տարողությամբ ընդգրկում է մի քանի միլիարդ տարի։

Սերգեյ ԺՈՒԿՈՎ
«Լարել Ֆրանս»



Ղրիմի Եվպատորիա քաղաքում 19-րդ դարում արդյունավետ աշխատանք էր կատարում վաղամեռիկ ճարտարապետ, մեր հայրենակից Պ. Յու. Սեֆերովը։ Նրա շատ կառույցներ Ռուսաստանի հարավի փոքր քաղաքների իսկական զարդն էին։ Եվպատորիայի հիշարժան վայրերից է դրամատիկական թատրոնի շենքը, որը կառուցել է հայ ճարտարապետը՝ քաղաքի գլխավոր ճարտարապետ Ա. Հենրիխի հետ։

ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հարգելի խմբագրություն.

Ողջ հայությունը հպարտությամբ է սպասում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին նվիրված հանդիսություններին։ Դրանց մեջ, երևի թե, ամենանշանակալին կլինի Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու բացումը Երևանում։

...Ասում են, թե նոր եկեղեցու քարերը սառն են լինում։ Սառն են լինում, քանի դեռ նրանց մեջ հոգի չի դրվել։

Հոգի դնելու բազում ձևեր կլինեն, որոնցից մեկը, կարծում եմ, շինարար-վարպետների նվիրված և անթերի աշխատանքն է լինելու։

Հենում մեր շատ եկեղեցիների պատերին եղել են արևային ժամացույցներ։ Հետևելով մեր ավանդներին, առաջարկում եմ եկեղեցու հարավային պատին քանդակել արեգակնային ժամացույց (եկեղեցու մանրակերտին ծանոթ եմ, ժամացույց տեղադրելու հրաշալի տեղ կա)։

Եվ քանի որ երկար տարիներ ես ուսումնասիրել եմ արեգակնային ժամացույցները, դրանց հաշվարկման և տեղադրման մեթոդները, առաջարկում եմ հաշվարկի ավելի ճշգրիտ եղանակ։ Այդ մասին է ստորև ներկայացվող իմ հոդվածը։

Ժամացույցի հաշվարկի կատարումը և տեղադրման աշխատանքներին մասնակցելն էլ հենց կլինի իմ փոքրիկ մասնաբաժինը այդ մեծ տաճարի մեծ կառուցում, ու նաև դրանով էլ եկեղեցու մի քանի քար հոգի կառնեն։

Սերգեյ ՄԱՇԿԱՆՅԱՆ
Ճարտարագետ, ՀՀ կրթության և գիտության նախարարության Երևանի տարածքային տեսչության ավագ տեսուչ

Զվարթնոց այցելող զբոսաշրջիկի աչքերից չի վրիպի թանգարանի մուտքի մոտ դրված շրջանաձև մի փորագանդակ, որի վրա գրված են մաշտոցյան այբուբենի մի քանի տառեր։ Շատերի մտքով չի անցնի, որ այդ փորագանդակով մարդիկ որոշել են օրվա ժամերը։ Այո, դա ժամացույց է, որն արեգակի շնորհիվ, առանց լարելու «աշխատել է» դարեր շարունակ։ Այսպիսի ժամացույցներ պահպանվել են ոչ միայն Զվարթնոցում, այլև Հայաստանի տարածքում գտնվող վանքերում։ Այդպիսիները մինչև այժմ էլ պահպանվում են Նոյեմբերյանի Մշկավանքի, Դսեղի և Ծաղկաձորի վանքերի վրա, Արցախում և այլուր։

Արեգակնային ժամացույցների բազմաթիվ նկարագրություններ մենք հանդիպում ենք հայ աստղագետների աշխատություններում։ Այս բոլորը վկայում են այն մասին, որ հայ ժողովուրդը տարբեր աշխարհագրական լայնություններում ժամանակի չափման համար լայնորեն օգտագործել է ա[illegible]ական ժամացույցները։

...Կար ժամանակ, երբ մարդկանց այնքան էլ չէր հետաքրքրում ճիշտ ժամանակը. ցերեկը փոխարինվում էր գիշերով, ձմռանը հաջորդում էր ամառը։ Մարդիկ գիտեին այսքանը և բավարարվում էին դրանով։ Անցան ժամանակներ։ Անհրաժեշտ էր ժամանակի ավելի հաստատուն և ճշգրիտ չափում...

Արևի ճառագայթներով լուսավորված հրապարակում տնկված է սյուն։ Հենց որ արեգակը սկսում է ծագել ու շարժվել երկնակամարով (արեգակի շարժումը թվացող շարժում է, իրականում շարժվում է ոչ թե արևը, այլ երկիրը), սյան ստվերն էլ սկսում է պտտվել հիմքի շուրջը։ Սյան կողքին տնկելով ցցեր, մարդիկ ստվերի դիրքով գաղափար են կազմել օրվա ժամերի մասին։ Ահա և պարզագույն արեգակնային ժամացույց։

Արեգակնային ժամացույցները աշխատել են տարբեր ընկրգրքումներով։ Հիմնականում տարածված էին այն ժամացույցները, որոնց աշխատանքի սկզբունքը հիմնված էր օրվա ընթացքում ստվերի ուղղության փոփոխության վրա։ Կախված թվատախտակի դիրքից, այս ժամացույցները բաժանվում են երեք խմբի.

ա) ուղղահայաց արեգակնային ժամացույցներ, որոնց թվատախտակի հարթությունը ուղղահայաց է հորիզոնական հարթությանը,

բ) հորիզոնական արեգակնային ժամացույցներ, որոնց թվատախտակի հարթությունը զուգահեռ է հորիզոնական հարթությանը,

գ) հասարակածային արեգակնային ժամացույցներ. սրանց թվատախտակի հարթությունը թեքված է հորիզոնական հարթության նկատմամբ 90 աստիճան անկյունով։

Հայաստանում լայն տարածում են ունեցել ուղղահայաց արեգակնային ժամացույցները, որոնց թվատախտակը ուղղված է դեպի հարավ։ Սրանք սովորաբար փորագրվել են շենքերի կամ վանքերի հարավային պատերին։

Արեգակնային ժամացույցները, որոնք եղել են ժամանակի չափման առաջին գործիքները, մեր օրերում գրեթե մոռացության են մատնված։ Մի՞թե չի կարելի և անհրաժեշտ չէ՞ արդյոք պատրաստել արեգակնային ժամացույցներ, որոնք կտեղադրվեն շենքերի պատերին կամ, ասենք, զբոսայգիներում։ Եվ պատրաստված լինելով հայկական բազմազան քարերի հատկությունից և ունենալով գեղեցիկ ճարտարապետական ձևավորում, կզարդարեն մեր շինությունները։ Մյուս կողմից, որպես հնություն և հնագույն մշակույթի մի պատառիկ, այն կշարունակի պահպանվել և փոխանցվել գալիք սերունդներին։ Կարծում եմ, որ անհրաժեշտ է։

Հայտնի է, սակայն, որ ինչպիսի ճշտությամբ էր պատրաստված լինի արեգակնային ժամացույցը, նրա ցուցմունքի մեջ միշտ գոյություն ունի որոշ սխալ։ Այս սխալի էությունը հասկանալու, և, ընդհանրապես, արեգակնային ժամացույցի աշխատանքը պատկերացնելու համար անհրաժեշտ է հիմնական ժամանակի չափման մասին։

Ժամանակի չափման համար օգտվում են բնության մեջ տեղի ունեցող խիստ պարբերական երևույթներից։ Որպես այդպիսին ընտրված է երկնակամարի օրական պտույտը, այսինքն՝ երկրի իր առանցքի շուրջը կատարած օրական պտույտը և նրա տարեկան պտույտը Արեգակի շուրջը։ Սա նշանակում է, որ երկնակամարում ընտրած ցանկացած կետի տեղաշարժումով կարելի է գաղափար կազմել անցած ժամանակի մասին։ Աստղագիտության մեջ տարբերում են երեք ժամանակ՝ աստղային, իրական արեգակնային և արեգակնային միջին։ Քանի որ մեզ հետաքրքրում է միայն արեգակնային ժամանակը՝ մի քանի խոսք դրա մասին։

Իրական արեգակնային օր է կոչվում արեգակի տեսանելի սկավառակի կենտրոնի երկու վերին կուլմինացիաների միջև ընկած ժամանակամիջոցը։ Սակայն իրական արեգակնային օրվա տևողությունը տարվա ընթացքում փոփոխվում է։ Սա բացատրվում է նրանով, որ երկիրն իր ուղեծրով շարժվում է անհավասարաչափ, և որ այդ ուղեծիրը ունի որոշ թեքություն եկողային հասարակածի նկատմամբ։

Արեգակնային իրական օրվա անհավասար տևողությունը խանգարում է իրական արեգակնային ժամանակից օգտվելուն։ Գործնականում անհնարին է պատրաստել ժամացույց (բացի արեգակնային ժամացույցից), որը ցույց տա իրական արեգակնային ժամանակը։ Ահա այս է պատճառը, որ առօրյա կյանքում օգտվում են այսպես կոչված արեգակնային միջին ժամանակից։ Արեգակնային միջին օրը իրական օրվա միջին տևողությունն է։ Բնականաբար, միջին արեգակնային և իրական արեգակնային ժամանակների միջև միշտ կլինի տարբերություն։ Այս տարբերությունը արտահայտվում է այսպես կոչված «Ժամանակի հավասարումով»-ով։

Այդ կերպ ասած, մեր ձեռքի ժամացույցի ցույց տված միջին ժամանակը ստանալու համար պետք է իրական արեգակնային ժամանակին՝ արեգակնային ժամացույցի ցուցմունքին, ավելացնել (պլյուս կամ մինուս նշանով) տվյալ օրվան համապատասխան «ժամանակի հավասարումը»։

Անհրաժեշտ է նշել, որ այս տարբերությունն անընդհատ փոփոխվում է և կազմում զրոյից մինչև տասնվեց րոպե։ Ապրիլից մինչև սեպտեմբերի կեսը այն չի գերազանցում վեց րոպեից։ «Ժամանակի հավասարումը» սովորաբար տրվում է կորի տեսքով կամ գրվում է աստղագիտական օրացույցներում աղյուսակների տեսքով։

Արեգակնային ժամացույցներից օգտվելիս, անհրաժեշտ է հաշվի առնել նաև դեկրետային և գոտիական ու տեղական ժամանակների տարբերությունը։ Այս տարբերությունները կարելի է հաշվի առնել և վերացնել ժամացույցները տեղադրելու ժամանակ։ Եվ եթե արեգակնային ժամացույցների հետ որևէ ձևով տրվի նաև «ժամանակի հավասարումը, կստացվի, որ առանց մեխանիզմի ու լարելու աշխատող խրոնոմետրերը ցույց կընտան միջին արեգակնային ճշգրիտ ժամանակը։

ԽԱՅՏԱՐԱՐԵՏ ԱՔԽԱՐՀ

ՊԱՂՊԱՂԱԿ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Ոգ օրերին ո՞վ կհրաժարվի համեղ պաղպաղակից։ Իսկ երբ է ստեղծվել այն։

Պարզվում է, որ մեր նախնիները միշտ էլ համտեսել են այդ համեղ ուտելիքը, անգամ այն ժամանակ, երբ սառնարանների մասին երազել անգամ չէին կարող։ Հայտնի է, որ արաբները, որոնք 11-րդ դարում արդեն նվաճել էին Սիցիլիան, պատրաստում էին այդպիսի անուշներ։ Նրանք դատարկում էին թռչունի ձուն, կեղևը լցնում անուշահոտ ջրով և հետո մի ամբողջ գիշեր այն պահում ձյան մեջ։ Հռոմեացիները ևս ունեին իրենց սառը աղանները։ Նրանք հեռացնում էին դեղձի կորիզը և նրա տեղը սառույցի կտոր դնում։ Բայց ոչ-ոք այս գործում չէր կարող հասնել չինացիներին։ Հռոմեացիներից շատ առաջ նրանք համտեսում էին նարընջի, կիտրոնի կտորներով և նաև հատիկներով համեմված ձյունը։ Նման պաղպաղակ այսօր կարող ես համտեսել միայն ընտրյալների համար նախատեսված թանկարժեք ռեստորանում։

100 ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱԺԻՇՏՆԵՐԸ

Իհարկե, նրանք նման չեն Մադոննային։ Բայց նագոյացի 100 տարեկան երկվորյակները բոլոր դեպքերում ցույց տվեցին իրենց «տաղանդը» Ճապոնիայի երաժշտական աշխարհին։ Կին և Ջին Նարիտաները վերջերս թողարկեցին իրենց առաջին երգի սկավառակը։ Երգը կոչվում է «Կին-ջան և Ջին-կան»։ Թեև երկվորյակները ճապոնական հեռուստատեսությամբ ցուցադրելուց հետո ստացան պոպ-հրոչակավոր երգչի կարգավիճակ, բայց նրանք, ըստ էության, չեն երգում. այլ միայն երգին ձայնակցում են «հա՛յ-հա՛յ» բառերով, ծափահարում են, ճիշտ երեխաների պես, երբ երգում են մի որևէ բանաստեղծական քառյակ։ Նրանք դեռևս ոչ մի համերգային շրջագայության ծրագիր չունեն, բայց երկվորյակների մասին արդեն նկարահանվել է տեսաֆիլմ։

Ըստ «Նյուսուիքի» պատրաստեց՝
Սուսաննա ՇԱՀԲԱԶՅԱՆԸ

Եղիշե Չարենց. հավերժական մտքեր

— Այ տղա, հրաշք է, էդ ինչքան էներգիա կա մի ատոմի մեջ, ընդհանրապես բընության մեջ, և մարդ դեռ ինչքան քիչ է օգտվում դրանից և էլի տաժանակիր աշխատանք կատարում հանքերում մի բուռ քարածուխի համար։ Ափսոս, որ հաճախ գիտության նվաճումները մարդկությանը ծառայելու տեղ, ծառայում են նրա ոչնչացմանը։ Բա եթերը, ռադիոն. ո՞վ գիտե, թե էս սենյակում, օդի մեջ ինչքան ձայներ, գույներ ու պատկերներ կան, սկսած հին դարերից մինչև հիմա։ Այ, թե հընարավոր լիներ այդ բոլորը ոռսպալ, տեսնել ու լսել...

— Մարդ ապշում է էս սաղմի աճումից։ Այ տղա, մի չընչին սաղմ է... էս ո՞նց է զարգանում և ինչ ներքին դիսցիպլինա ունի, որ մարմնի մասերը համաչափ են ստեղծվում, և, ասենք, ոտքի մատները ընտեղծելուց հետո, նյութը կանգ է առնում և չի շարունակում չափից ավելի երկարացնել մատները։

— Գրողի կյանքի մեծագույն մասն անցնում է իր աշխատանոցում, ուրեմն և բնակարանի լավագույն սենյակը պետք է աշխատանոցը լինի։

— Յուրաքանչյուր «հորելյան» ոչ այլ ինչ է, եթե ոչ հարգանքի և վստահության արտահայտություն դեպի տրվյալ անձնավորության ոչ միայն անցյալ վաստակները, այլև ներկան և ապագան։

— Ես չեմ կարող չգովել այն ստեղծագործությունները, որոնք արժանի են գովասանքի։ Ես խոմ էժան քննադատ չեմ, որ ղեկավարվեմ անձնական հաշիվներով։

— Բնածին տաղանդը, ձիրքը փողային գործիք նվագողի շունչն է միայն։ Գրական բարձրը կուլտուրան ու կյանքի ճանաչողությունն են տալիս մատների այն վարժ խաղը, որի միջոցով շունչը դառնում է նըվագ։ Տերյանն իր ձիրքի գիտակցաբար օգտագործումով ու կուլտուրայով դարձավ մեր պոեզիայի ամենապաշտելի անուններից մեկը։

— Հանգն ու վանկը քմահաճ բան են, քաշում, տանում են բոլորովին ուրիշ կողմ և պիտի կարողանաս սանձել, դիմադրել։

Երբ ես մի բան եմ գրում և հեշտ է գրվում, այդ առաջին անազանգն է, որ ինչ-որ մի բան կարգին չէ և ես սկսում եմ տքնել, մշակել մինչև որ ճիշտ արտահայտեմ իմ զգացածը։

— Շատ հարուստ ու լավ տրադիցիաներ ունի մեր պոեզիան։ Դա և լավ է և վատ։ Այսպիսի հարուստ տրադիցիաներ ունեցող ժողովրդի բանաստեղծների գործն ավելի դժվար է, որովհետև իսկույն կա հեշտ ճանապարհը, իներցիան՝ տրադիցիաները պահպանելու անվան տակ կրկնել եղածը։ Բայց տրադիցիա ասածը հո պահած գանձ չէ՞, որ հանես, նայես ու նորից տեղը դնես։ Ազգային տրադիցիան պահպանել, նշանակում է զարգացնել այդ տրադիցիան, ձևեր գտնել եղելու այն նորը, որ այսօր կա բոլոր ժողովրդի կյանքում։

— Բանաստեղծը պետք է ժամանակի երգիչը լինի, նրա գրվածքները պիտի վերարտադրեն այն, ինչ բնորոշում է էպոխան։ Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն թեմայի ճիշտ ընտրություն, այլև, որ գլխավորն է՝ ընտրած թեմայի մեջ դնել ժամանակի ոգին։

— Ինչքան էլ ակնարկը փաստերով լիքը լինի, մի բան, որ հեղինակի առաջնահերթ բարեմասնությունն է լինելու, բայց եթե դրանք մատուցված են չոր, անարտահայտիչ ձևով, ընթերցողին չեն գրավի։ Ակնարկը պիտի ձգտի ընթերցողի սիրտը թրթռացնել, ապրեցնել, մինչև իսկ խանդավառել։ Այնտեղ պետք է ոչ միայն միտքը խոսի, այլև սիրտը։ Անկիրք, անիանդ ակնարկը ո՞ւմ է պետք։

— Ինտուիցիան մեծ բան է։ Բնազդն էլ, արյունն էլ։ Առանց դրանց ի՞նչ արվեստ, ի՞նչ գիտություն, ի՞նչ մարդկություն։ Եվ ինչքա՞ն էլ առեղծվածային են։ Տեսնես՝ ե՞րբ պիտի կարողանանք մեր հավասարանում բազա ստեղծել ու խելոք ջահելներին մղել այդպիսի հարցերի ուսումնասիրության։ Այ, գերմանացիները՝ էքսպերիմենտալ էսթետիկայի ու հոգեբանության մի քանի լավ օջախներ ունեն։ Եվ բավականին լուրջ աշխատանք են տանում, շատ մեծ արդյունքների են հասել։ Ոչինչ, մենք էլ կանենք։ Պիտի լավ մտածել ու ելքեր գտնել։

— Ես այդ ցուցակներին կարևորություն չեմ տալիս. բոլորն էլ մեր մարդիկ են, միայն թե մեկնումեկը իսկապես գոռոզ դառնա։

Գրող դառնալը և կոչում է և տառապանք։ Քչերն են կոչված, իսկ տառապելու ամեն մարդ ընդունակ չէ։

Քաղեց՝
Հրաչյա ՀՈՒՆԱՆՅԱՆԸ

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Գլխավոր խմբագիր՝
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 բ, հեռախոս՝ 22-44-26։

«Պարբերական» հրատարակչության տպարան։ Դասիչ՝ 69238, գրանցման վկայական՝ 448։ Ստորագրված է տպագրության՝ 15.05. 1997 թ. (1510—1534)։

Թերթի հովանավորն է «ԿԱՆԱՉ» ՓԲԸ

«ГИТУТЮН» — («Наука»)
Газета Национальной Академии наук РА

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ

ԹԱԴԵՈՍ ԲԱՐՈՆՉԸ

Նա քանդակագործություն է սովորել Արևմտյան Եվրոպայում՝ Մյունխեն, Ֆլորենցիա, հաղորդակից դարձել ժամանակի լավագույն վարպետների աշխատանքներին։ Վերադառնալով իր ծննդավայրը՝ Լվով, հայ քանդակագործ Թադեոս Բարոնչը ստեղծագործական բեղմնավոր կյանքով ապրեց. նրա քանդակները զարդարեցին Լվովի խնայդրամարկղի (լուսանկարում), օպերային թատրոնի, քաղաքապետարանի, գիմնազիայի և այլ շենքեր։ Թ. Բարոնչի քանդակները Գդանսկի, Կաուլովի Վարիի, Տրուսկավեցի բազմաթիվ շենքերի զարդն են, իսկ նրա տասնյակ ստեղծագործություններ պահվում են Լվովի պատկերասրահում։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ «ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 1997—98 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (արտաքին քաղաքականություն և դիվանագիտություն, համաշխարհային քաղաքականություն և էկոնոմիկա)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (կոմերցիա, ֆինանսներ և վայրուտա-վարկային ու տրանսպորտային գործառնությունների էկոնոմիկա և կազմակերպում, հաշվապահական հաշվառում և աուդիտ, մարքեթինգ և գովազդ)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ (միջազգային հանրային իրավունք, միջազգային մաքսային իրավունք, վաղչական իրավունք, միջազգային առևտրի իրավունք)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՉՈՒԹՅԱՆ (միջազգային ժուռնալիստիկա, ռադիո-հեռուստալրագրող, թարգմանչություն ,միջազգային տուրիզմ)

ՊԱՐՍԻՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԹԱՐԳՄԱՆՉՈՒԹՅԱՆ (Թեհրանի Ազատ համալսարանի մասնաճյուղ)

ՌՈՒՍԱՆՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն լեզուներ)

ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ (արաբական, թուրքական, պարսկական և եզդիա-քոդական բաժիններ)

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ (տնտեսական-իրավական, պետական-իրավական, դատա-փորձագիտական, դատա-դատախազական, քննչական)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (մենեջմենթ, մարքեթինգ, մակրոէկոնոմիկա, ֆինանսներ և բանկային մենեջմենթ, հաշվապահական հաշվառում և աուդիտ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն)

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ (պատմության, աշխարհագրության և տուրիզմի բաժիններ)

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ (մանկավարժություն, տարրական ուսուցման մեթոդիկաներ)

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ (հոգեբանության, նախադպրոցական մանկավարժության, կերպարվեստի և երաժշտության բաժիններ)

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ (քիմիայի, կենսաբանության և դեղաբանության բաժիններ)

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ (կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի բաժիններ)

ԴԵՖԵԿՏՈԼՈԳԻԱՅԻ (լոգոպեդիա, դեֆեկտոլոգիա, հոգեբանություն, օլիգոֆրեն մանկավարժություն, դեֆեկտոլոգիա-պսիխոթերապիա)։

Համալսարանի ընդունելությունը կանցկացվի մրցույթային կարգով։ Ուսանողներն անհրաժեշտության դեպքում ուսումը կարող են համատեղել աշխատանքի հետ. նրանց ուսուցումը կկազմակերպվի անհատական գրաֆիկով։ Ուսման տեվողությունը մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկաների, հոգեբանության և մանկավարժության ու դեֆեկտոլոգիայի ֆակուլտետներում չորս տարի է, մյուս ֆակուլտետներում՝ հինգ տարի։ Ծնողազուրկ և զոհված ազատամարտիկների երեխաները ազատվում են ուսման վարձից, գերազանցիկները ստանում են կրթաթոշակ։ Պարապմունքները սեպտեմբերից կսկսվեն համալսարանի նոր ուսումնական շենքում։

Համալսարանի կնքած պայմանագրերի հիման վրա գերազանցիկ ուսանողներն ու նպատակային ասպիրանտներն ուղարկվում են սովորելու և պրակտիկան անցկացնելու Փարիզի, Լիոնի, Մարսելի, Աթենքի, Թեսալոնիկի, Միլանի, Թեհրանի, Մադրիդի, Կաստիլյա-Լամանչիի և Վառնայի համալսարաններում, Մոսկվայի և Թեհրանի միջազգային հարաբերությունների ինստիտուտներում։

Փաստաթղթերն ընդունվում են մինչև հուլիսի 20-ը։ Ընդունելության քննությունները կանցկացվեն հուլիսի 21-ից 30-ը։ Համալսարանի հասցեն՝ հինը՝ Ալեք Մանուկյան 18, նորը՝ Մոսկովյան 8 (ՀՀ զինկոմիսարիատի և Պատանի հանդիսատեսի թատրոնի հարևանությամբ)։

Հեռախոսներ՝ 55-24-70, 55-67-90, 55-46-80։

ՌԵԿՏՈՐԱՏ

ՄՐՑՈՒՅԹ

ՀՀ ԳԱԱ նախագահությունը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ԳԱԱ օտար լեզուների ամբիոնի անգլերեն լեզվի դասախոսի երկու թափուր տեղերի համար։

Մրցույթին կարող են մասնակցել դասավանդման մեծ փորձ ունեցող մասնագետները։ Դիմումները ներկայացնել մինչև ս.թ. հունիսի 15-ը։

Դիմել՝ Մարշալ Բաղրամյանի պող. 24, 7 սենյակ։